№ 189 ՈՒՐԲԱԹ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1 — 1906 — ՈՒՐԲԱԹ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1 № 189

ԵՐԵՍՈՒՆՉՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

# ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլի.
առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊԷԿՈՎ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.

Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է
ԽԱԹԱԲԱԼԱ
Երգիծական-սատիրական շաբաթաթերթի բաժանորդագրութիւնը

Տարեկան գինն է Թիֆլիսում 4 ր., դուրսը՝ 5 ր., 1/2 տարվայ գինն է Թիֆլիսում 2 ր. դուրսը՝ 2 ր. 50 կ., երեք ամսվանը 1 ր., դուրսը՝ 1 ր. 25 կ.։

Ծան.—Սկզբում, մտադրվելով «Խաթաբալան» երկու շաբաթը մի անգամ լոյս ընծայել, տարեկան գինը որոշել էինք 2 ր. և 2 ր. 50 կ.։ Բայց այժմ, քանի որ այն շաբաթաթերթ դարձրինք, այդ պատճառով էլ գինը կրկնապատկում ենք։

Մենք ընդունում ենք և զանազան յայտարարութիւններ ամեն լեզուներով։

Վաճառվում է գաւառական բոլոր հայաշատ քաղաքներում։

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ, редакція «Хатабала».

Շաբաթ, սեպտեմբերի 2-ին, լոյս կը տեսնի № 13.

Խմբագիր-Հրատարակող՝ Աստ. Երիցեան

(ու. կ.) աո. 1—2

Ռուսաց Կայսերական Երաժշտական Ընկերութեան
ԵՐԱԺՇՏԱԳԷՏ
ԴԱՇՆԱԿԱՀԱՐ
ՅՈՎՍԷՓ ՏԷՐ-ԴԱՒԹԵԱՆ
Նիքոլաեւսկայա փողոց, 40.

Ընդունելութիւնը և պարապմունքները ամբողջ տարի
Վճարը՝ իր մօտ 9 ր. ամսական, իսկ տներում հրաւիրվելով 9 ր. ժամը։
(ա. օր.) 6—8
(աո.)

Ս. ՊԱՏԱՐԱԳԻ ԵՐԳԵՑՈՂՈՒԹԻՒՆ
Յարմարեցրած [illegible] համար
ԳԻՆԸ 20 ԿՈՊԷԿ
50-ով առնողին 20% զիջում։
Դիմել՝ Армавиръ (Кубан. обл.) Регенту С. Шааняну.
աո. 1—5

ԴԱՇՆԱԿԱՀԱՐ ԵՐԱԺՇՏԱԳԷՏ
Ի. Մ. ՄԱՏԿՕՎՍԿԻ
Սեպտեմբերի 1-ից բացել է իր տանը դաշնակահարութեան կուրսեր, ուր աւանդվում են տեսական երաժշտութիւն եւ նուագ։
Աշակերտների ընդունելութիւնը շարունակվում է առ. 10—2 ժ. և 5—7 ժ. եր.։
Ուսմունքը սկսվել է սեպտեմբերի 1-ից։
Պայմանների մանրամասնութիւնները՝ Саперная ул., д. № 5, кв. И. М. Матковскаго.
աո. (ու.կ.և.) 1—3

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ
Մամուլն է յանձնված տպագրութեան
„ՁԱՆԳԱԿ“
օրացոյց 1907 թվի, ա. տարի, առանձին կարևոր յաւելուածներով։
Արդի սովորութեան հակառակ հեռու պահելով ինձ ամեն մի փքուն ռէկլամներից, թողնում եմ այդ աշխատութեան բանիմաց ընթերցող հասարակութեան անաչառ քննադատութեան։
Ալէքսանդր Սանոյեանց
Ալէքսանդրոպոլ.
աո. 1—1

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
„ԱՇԽԱՏԱՆՔ“
շաբաթաթերթի
Սեպտեմբերից մինչև տարվայ վերջը 1 ր. 50 կ.։
աո. 3—3

ԲԺԻՇԿ
Կ. Յ. Ղազանճեանը
Վերադառնալով արտասահմանից Կարս՝ վերսկսեց ընդունել աչքի, ներքին և վեներական հիւանդութիւն ունեցողներին։
(աո.) 3—4

ՄԱՆԿԱԲԱՐՁՈՒՀԻ
Ս. Զ. ԽԻՋԱՆԵԱՆՑ
Ընդունում է հիւանդներին առաջվայ պէս։ Սօլօլակ, Վելեամինօվսկայա փողոց № 14։
(և. հ. կ.) (աո.) 4—6

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Կենտրոնական ժողովի առիթով. Վերջին տեղեկութիւններ. Շարժումներ և հետևանքներ. Էջմիածնի համագումարը. Դուք դեռ շարունակում էք. Կուսակցութիւնների շուրջը. Մուսուլմանների համագումարի բանաձևը հայ [illegible] ընթերցողներին մասին. Մուսուլմանների համագումարը Նիժնի-Նովգորոդում. [illegible] սկսվել է. Բարձրագոյն դպրոցներ [illegible] Բագւում. Բաթումի հայերին. [illegible] դաշնակցական ընկերներին. Նամակներ Խմբագրութեան. [illegible] ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. [illegible] ՌՈՒԹԻՒՆՆԵՐ, ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱ-

## ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԱՌԻԹՈՎ

### I

Մեր ընթերցողները գիտեն մեր վերաբերմունքը դէպի Էջմիածնի կենտրոնական ժողովը։

Մենք պաշտպան ենք եղել կենտրոնական ժողով հրաւիրելու գաղափարին և բողոքել ենք 14 միաբանների դէմ, երբ նրանք առանձին խնդրագրով դիմել էին Վեհափառ Կաթողիկոսին և խնդրել փոխել այդ ժողովի հրաւէրը։ Մի շարք յօդուածներով մենք աշխատել էինք ցոյց տալ, որ կենտրոնական ժողովի գումարման խոչընդոտ հանդիսանալը սխալ կը լինէր, որովհետև այդօրինակ, կենտրոնական ժողովով սկիզբն է դրվում մի կանոնաւոր կազմակերպութեան, որ պէտք է զբաղվէր մեր դպրոցական և ուրիշ կուլտուրական խնդիրներով։

### II

Սակայն, երբ սկսվեցին ընտրութիւնները, մենք տեսանք մի շարք այնպիսի տխուր երեւոյթներ, որոնք իրապէս ոչնչացնում էին կենտրոնական ժողովի գաղափարը և նրան դարձնում մի խաղ, կողմնակի ձգտումների և նպատակների մի ասպարէզ։

Մենք խիստ բողոքեցինք ընտրութիւնների ժամանակ եղած զեղծումների և բռնութիւնների դէմ, որովհետև տեսնում էինք ժողովրդական քուէն վտանգված, ժողովրդական ձայնը կեղծված, հասարակական կարծիքը ճնշված և խեղաթիւրված։

Եւ մենք արդէն շատ թոյլ զգացմունքով և կոտրված սրտով հաշտվում էինք կենտրոնական ժողովի գումարման իրաւունքի գաղափարի հետ։

### III

Իսկ երբ գնացինք Էջմիածին և տեսանք թէ ինչպէս են ժողովականները վերաբերվում իրանց առաջ դրած հարցերին, մենք այլ ևս անկարող էինք ճանաչել որևէ բարոյական արժէք այդ ժողովի վերաբերութեամբ։ Ժողովականները ամենևին մտադիր չէին հաշուի առնել ժողովրդի տրամադրութիւնը, տրված լիազօրութիւնների սահմանները և յայտարարեցին իրանց ինքնիշխան ասելու և վճռելու ամեն բան, որ նրանք նպատակայարմար կը համարեն իրանց տեսակէտներով։

Մենք հեռացանք ժողովից, թողնելով մեր վարմունքի դատաստանը մեզ ընտրող ժողովրդին։

### IV

Եւ ժողովրդից սկսեցին լսվել ձայներ։ Շատերը միացան մեր բողոքներին և յայտնեցին իրանց անվստահութիւնը դէպի ժողովի կազմը և նրա ընդունած գործելու եղանակը։

Հասարակական բողոքի ձայնը սկսել էր ընդարձակվել և սաստկանալ։ Եւ նա կը ստանար մի հասարակական հոսանքի բնաւորութիւն, որը կարող էր պարունակել իր մէջ ուսանելի և հետաքրքրական տարրեր ապագայի համար։

Եւ անկասկած, հասարակական կարծիքը իր բարոյական ոյժով կոչնչացնէր կենտրոնական ժողովի անարժան գործողներին։

### V

Բայց հանգամանքները բոլորովին ուրիշ բնաւորութիւն ստացան։

Կենտրոնական ժողովը փակվեց վարչութեան ձեռքով։

Դա ամենևին ցանկալի ելք չէր։ Դա տխուր մի հանգամանք է, որով ոտնակոխ արվեց մի սկզբունք և սպանվեց բարոյական մի գործ։

Մենք ամենևին չէինք ցանկանում, որ վարչութեան միջամտութեամբ մեռնէր կենտրոնական ժողովը։ Այդպիսի վախճանը շօշափում է ժողովրդի իրաւունքը և բարոյական ոչ մի հեղինակութիւն չունի։

Կենտրոնական ժողովը ինքն իրան պէտք է մեռնէր բնական մահով և հասարակութեան դատապարտութեամբ։

### VI

Մենք միշտ նշանակութիւն ենք տուել միայն բարոյական ազդեցութիւններին և հասարակութեան սեփական ինքնուրոյն գործունէութեան։

Ուստի վարչութեան արած քայլով միայն մի նոր խոչընդոտ աւելացաւ կանոնաւոր զարգացման հողի վրա։

Թողէք հասարակութեանը, որ նա ինքը տեսնէ իր հաշիւները իր գործողների հետ և իր հեղինակութեամբ կռուէր մղէ այն երևոյթների դէմ, որ նա համարում է անհամակրելի և վնասակար։

Ա. Քալանթար

## ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Օրդուբաթ, 31 օգոստոսի

Գաւառապետի փոխանորդը այցելելով զանազան տեղեր, խաղաղացրեց մտքերը։

Պահակախմբեր կան զանազան տեղերում։ Ազգաբնակութիւնը հանգստանում է։

Օրդուբաթում և Ագուլիսում խանութները բացվել են։

Գորիս, 31 օգոստոսի

Խաղաղարար խառն յանձնաժողովներ շրջեցին մի քանի խոշոր գիւղեր, քարոզելով հաշտութիւն հայերի և թուրքերի միջև։

Ազգաբնակութիւնը, որ յոգնած է ընդհարումներից և զզված կոտորածներից, ջերմ ցանկութիւն է յայտնում հաշտվելու։

Կատարեալ վստահութիւն դեռ չը կայ, բայց հաշտվելու ցանկութիւնը մեծ է։

Կարճևան (Գողթանի գաւառ), 20 օգոստոսի

Կեանքի պայմանները մեզանում քանի գնում վատթարանում են. 17 օր է Օրդուբաթի, Ագուլիսի հետ հաղորդակցութիւնը ընդհատված է, պօստը նոյնպէս չէ ստացվում, և այդ պատճառով պակասում են մանրամասնութիւնը. ինչ է կատարվում մեր շուրջը, չը գիտենք։

Ղափանը այժմ իր շրջակայքով դարձել է թատերական մի բեմ։ 15 օր է սկսված է հայ-թուրքական կռիւը։ Թուրքերը մեծ պատրաստութեամբ յարձակվել են երկու գիւղերի վրա. հրդեհել, կրակել են «Քաջարանց» գիւղը, իսկ երկրորդը, դիմադրել են և ազատել։ «Օղչի» ձորից բաւականի թուրքեր փախել և ապաստան են գտել Օրդուբաթի շրջանում. նրանք գրգռում են օրդուբաթցիներին յարձակում գործելու։ Կարճևանից դէպի Գողթանի գաւառը անցուդարձ անող չը կայ։

Անցեալ օրը լուր բերին թէ «Ալանգեազի» սարից քշել տարել են օրդուբաթցիների 500 հատ ոչխարը։ Թէ ով, չը գիտենք։ Մեզանում կեանքը սոսկալի է. մի կողմից Ղափանի թարաքամաները, միւս կողմից Օրդուբաթի թուրքերը, իսկ երրորդ անցքը Պարսկաստանի սահմանն է—«Արազը»։ Այս բոլորս շրջապատված այս ցաւալի վիճակով, կտրված են խսպառ մեր բոլոր յարաբերութիւնները քաղաքների հետ։ Աւելացրէք և հացի պակասութիւնը. այս տարի բերքը սպասածից շատ քիչ է. ինչքան որ ձեռք են բերել, այն էլ հազիւ բաւականանայ մի 2 ամիս. երաշտը փչացրել է խեղճ մեր սև գիւղացու աշխատանքը, ոչ մի եկամուտ չը կայ. ինչ անէ խեղճ գիւղացին, նա միշտ տրտնջում և լացելով ասում է. «Երևի Աստուած է մեզ վրա բարկացել. տարին 12 ամիս չարչարվում, վարում, ցանում ենք, մեր սերմած սերմն էլ յետ չենք ստանում»։

Դրութիւնը մեր կողմերում լուրջ է. եթէ այսպէս մի քանի ամիս շարունակվի, մեզանում սովը կը տիրապետի։ Այդ միակ միջոցից ազատ լինելու համար հարկաւոր է դրացի թուրքերի հետ հաստատ հաշտութիւն և խաղաղութիւն, որով գիւղացիքս հնար կունենանք նրանց աւելորդ ցորենով լրացնել մեր պակասը։

Ղափանի և Օրդուբաթի ադմինիստրացիան լուռ է այս բոլորի դէմ. ոչ մի ջանք չէ գործադրում. երևի ասում է ինքն իրան. «Թող կոտորեն միմեանց, հայը թուրքին, թուրքը հային». այսպէս է նրա բուն նպատակը։

Ոսկան Յարութիւնեան

Ղազանչի, 23 օգոստոսի

Օգոստոսի 21-ին ղազանչեցի մօտ վաթսուն տարեկան Սիմոն Գէորգեանց, հակառակ իր երիտասարդ որդու և մի քանի միւս գիւղացիների յորդորների՝ չը գնալ Ղազանչում պատահած գէօնիւզցի Մահմադ Մաշադի-Ալմամմադ-օղլու հետ, գնում է Գէօնիւզ հարեան թուրքաբնակ գիւղը իր պարտատէրից երկու պուդ գարին ստանալու համար։ Ծերունու որդին և մի քանի բարեկամները, որոնք Սիմոնին յիշեալ թուրքի հետ գիւղի սահմանից անց էին կացրել, ամբողջ օրը սպասում են Սիմոնի վերադարձին, իսկ Սիմոնը չէ վերադառնում. սպասողները երեկոյեան նկատում են թէ ինչպէս Գէօնիւզի թուրքերը Ղազանչու սահմանամօտ տեղերից շտապ քշում են դէպի գիւղ իրանց տաւարները. այստեղ սպասող տղերքը կասկածի մէջ են ընկնում, վերադառնում են տուն և այդ գիշեր էլ են սպասում. Սիմոնը չը կայ ու չը կայ։ Միւս օրը լուր է տարածվում, որ Գէօնիւզի թուրքերը Սիմոնին մորթել են. և խսկապէս վերևում յիշած Մահմադը իր երկու ընկերներ՝ Ալաքպար Աբբաս-օղլու, Էյլազ Հասան-օղլու և ուրիշների մասնակցութեամբ սոսկալի չարչարանքներով կոտորել էին խէնջարներով թշուառ մարդին գիւղից ոչ այնքան հեռու, յօշոտելով ամբողջ մարմինը, հասցնելով անթիւ վէրքեր, և ի միջի այլոց սրերով մաշկել էին ոտների ազդրերի կաշին, հանել էին աչքերը և աննկարելի անպատւութիւն հասցրել։ Այդպէս՝ անգութ գազաններին յատուկ վայրագութեամբ սպանելով խեղճ զոհին, հեռացնում են սպանման տեղից չորս վերստաչափ հեռու, թաղում են մի խուլ տեղում։ Գէօնիւզի աւան կամ կալուածատէր խանը ինչ ինչ հանգամանքներից շահագրգռված յայտնում է դէպքի մասին գաւառիս երրորդ մասի պրիստաւին, իսկ գիւղի թուրք մէլիքը ծածկում է դէպքը և ոչ մի խօսք չէ գրում պրիստաւին։ Պ. Պրիստաւը շտապում է Գէօնիւզ, ձերբակալում Մահմադ Մաշադի-Ալմամմադ-օղլի կոչված գազանին, որը և յայտնում է, ինչպէս իր երկու մասնակից ընկերներ Ալաքպարին և Էյլազին, նոյնպէս սպանութեան տեղը ու պահած վայրը, որտեղից հանում են զոհի դիակը։ Պ. պրիստաւը, ձերբակալելով երեք մարդասպաններին էլ, բերում է Ղազանչի, բանտարկում դատարանում, միւս օրը իր բեզիրենցեան տանելու համար. և որովհետև ստրաժնիկների պակասութիւն է լինում, գիւղացիներից գիշերվայ պահապան է նշանակում աւազակ մարդասպանների վրա։ Յանդուգն մարդասպանները գիշերը դատարանի պատը քանդելով փախչում են դէպի զանազան կողմեր։ Նշված պահապանները սթափվելով, երեք չարագործներին էլ գնդակահար են անում։ Այժմ հինգ ղազանչեցի պահապաններն էլ իրանց պարտքը կատարելու համար ձերբակալված, Նախիջևանի բանտումն են։ Յուսանք, որ արդարադատութիւնը շուտով անմեղ գիւղացիներին արձակէ բանտից։ Այսօր, օգոստոսի 27-ին, ուղևորվեցին դէպքի վայրը գաւառիս քննիչն ու բժիշկը...։

Ա. Տէր-Ստեփաննոսեան

Վերին Կարմիր-Աղբիւր, (Շամշադինի գաւ.)

Սրանից 4 օր առաջ, այսինքն օգոստոսի 26-ին, Վերին Կարմիր-Աղբիւր գիւղացի Յարութիւն Մխիթարեանցը (ոչխարատէր) գնում է Օքսուզլու թուրք գիւղը ցորեն առնելու։ Սրան խաբէութեամբ տանում են իբր ցորեն ծախելու և բռնում են, փակում մի սենեակում, հէնց ուզում են սպանել, ինչպէս է լինում մէկ մօլլա վրա է հասնում և զոհի կեանքը ազատում։ Թուրքերի տրամադրութիւնը վատ է, մանաւանդ Թովուզ կայարանում, ուր մէկ երևանցի և մի քանի էլ գանձակեցի խանութ պահող թուրքեր կան, որոնք միշտ տեղական թուրքերին թշնամութիւն են ներշնչում դէպի հայերը։

Էջմիածնից «Զանգին» հեռագրում են, օգոստոսի 30-ին.

«Կենտրոնական ժողովի պատգամաւորներին առաջարկված է հետևեալ ստորագրութիւնը տալ. «1906 թիւ, 30 օգոստոսի. մենք, ներքոյ ստորագրեալներս, տալիս ենք այս ստորագրութիւնը Էջմիածնի գաւառապետին, որ Նորին Կայսերական Մեծութեան Կովկասի Փոխարքայի կարգադրութիւնը Էջմիածնի կենտրոնական ժողովի համագումարի փակման մասին՝ մեզ յայտարարված է և մենք պարտաւոր ենք 24 ժամվայ ընթացքում, ադմինիստրատիւ կերպով ուղարկվելուց խուսափելու համար, հեռանալ Էջմիածնից մեր բնակութեան տեղերը և այստեղից գնալուց յետոյ, օրինական պատասխանատուութիւնից խոյս տալու համար, չը սարքել այլ ևս որ և է խորհրդաժողով»։ Պատգամաւորները ստորագրութիւն տուին հետևեալ բացատրութեամբ.

«Այս ստորագրութիւնը տալով, բողոքում ենք այդ կարգադրութեան դէմ, որը խախտում է իւրաքանչիւր քաղաքացու անյողդողդ իրաւունքները, խօսքի և ժողովի ազատութիւնը, ինչպէս և բռնաբարում է իւրաքանչիւր ժողովրդի իրաւունքները, որը միակ կարգադրիչն է իր ազգային-կուլտուրական գործերի»։

Պետերբուրգ, 30 օգոստոսի

Թոյլատրված է կադէտների համակայսերական համագումարը։

(Ռուս. Հեռ. Գործ.)

## ՇԱՐԺՈՒՄՆԵՐ ԵՒ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐ

—Գեներալ Մինի սպանութիւնից յետոյ Պետերհօֆում հսկողութիւնը սաստկացված է ուլանների, հեծեալ-գվարդիայի, դրագունների և կազակական գնդերի ձիաւոր և հետևակ պահակներով. ոստիկանները փոխանակ մէկի, կանգնած են զոյգ-զոյգ։

—«Нов. Путь» լրագրին հաղորդում են, որ Եկատերինոսլավում Բրեանսկի գործարանի երկու մասերը փակված են, որի շնորհիւ 1000 հոգուց աւելի բանւորներ մնացել են առանց աշխատանքի։ Մօտ օրերումս փակվելու է անոյին վառարանների արհեստանոցը ևս։ Քաղաքում տրամադրութիւնը լարված է և անհանգիստ։

—Ֆինլանդիայում վերջին երկու շաբաթվայ մէջ յաճախ տեղի էին ունեցել տօրպարների (բանւորների) ժողովներ և համագումարներ, որտեղ մշակել և յայտնել էին կալուածատէրներին մի ամբողջ շարք պահանջներ. 1) Բանւորական աշխատանքի օրը իջեցնել մինչև 10 ժամի. 2) Աւելացնել աշխատանքի օրավարձը՝ բանւորների համար 1 ռուբլի 50 կոպէկ և բանւորուհիներին 1 ռուբլի. 3) Վաստակը տալ ամսական երկու անգամ. 4) Շաբաթ և նախատօնակ օրերը աշխատանքները վերջացնել ժամը 4-ին. 5) Գործիքները կոտրելու համար տուգանքներ չը նշանակել. 6) Տկարութեան ամբողջ ժամանակ վճարվելու դէպքում պահպանել օրավարձը. 7) Գործադուլների ժամանակի համար լիովին վճարել։ Այդ և մի քանի ուրիշ պահանջներ մի քանի տեղերում առաջ են մղվել խաղաղ գործադուլի միջոցով։ («Нов. Путь»)

—Կովկասեան զինւորական շրջանի շտաբի կառավարչի անունով զինւորական մինիստրը ուղարկել է հետևեալ հեռագիրը. «2-րդ Գօրսկօ-Մոզդոկսկի գնդի հրամանատարը զեկուցանում է ինձ, որ գնդի 4-րդ և 5-րդ հարիւրեակները, որ ուղարկվել են Ստաւրոպոլի նահանգի Պետրովսկի գիւղը քաղաքացիական իշխանութիւններին օգնելու, ցրել են այն ամբոխը, որ աշխատում է ազատել բանտից կալանաւորված գործակալներին։ Բարեհաճեցէք հեռագրել զինւորական մինիստրին զեկուցանելու՝ ինչ տեղեկութիւններ կան այդ գործի մասին և թէ ինչ միջոցներ են ձեռք առնվել կարգը գնդի մէջ վերականգնելու համար»։ («Нов. Путь»)։

## ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

### XI

(Օգոստոսի 23-ի առաւօտեան նիստը)

Նիստը բացվում է երեկոյեան ժամը 7-ին, մասնակցութեամբ 51 պատգամաւորների։

Կարդացվում են վերաստուգող յանձնաժողովի երկու զեկուցագրերը Բեսարաբիայի թեմի 3 պատգամաւորների և Ղազախի գաւառի Շամշադին վիճակի պատգամաւորի ընտրութեան մասին։ Թէև կոնդակով Բեսարաբիայի թեմին իրաւունք է տրված ընտրել մի պատգամաւոր, բայց այդ թեմի պատուիրակների ժողովը, հիմնվելով այն հանգամանքի վրա, որ թեմում կան մօտ 60,000 հայեր, ընտրել էր 3 պատգամաւորներ—պ. պ. Գ. Չէօրեքչեանին, Զուրաբեանին և Յ. Թումանեանին, պարտաւորեցնելով այս երեքին անմիջապէս հրաժարվել, եթէ ժողովը երեքին էլ չընդունէ։ Վերաստուգող յանձնաժողովը, ապացուցած չը համարելով 60,000 թիւը և գտնելով, որ այդ թեմում կան մօտ 43—45,000 հայեր, առաջարկում է ընդունել միայն 2 պատգամաւոր։ Ժողովը, նկատի առնելով, որ այդ պատգամաւորներից երկուսը—Յ. Թումանեան և Գ. Չէօրեքչեան արդէն հեռացել են, որ եթէ երեքի ընտրութիւնը չը հաստատէ, միւս պատգամաւորն ևս (Զուրաբեան) ստիպված կը լինի հեռանալ և, հետևաբար, Բեսարաբիայի թեմը ոչ մի պատգամաւոր չի ունենայ, որոշեց, իբրև բացառութիւն, վաւերացնել 3 պատգամաւորների ընտրութիւնը։

Գալով Շամշադինի պատգամաւորի ընտրութեան, վերաստուգող յանձնաժողովը հնարաւոր չը գտնելով այդ վիճակի կողմից իբրև պատգամաւոր եկած Միքայէլ Աստուածատուրեանի ընտրութիւնը, որովհետև նրա ընտրութիւնը չէ վաւերացվել տեղական գործակալի կողմից, իսկ առաջնորդի կողմից անվաւեր է ճանաչվել, և նա, իբրև հաստատութիւն իր ընտրութեան, ներկայացրել է միայն մի թուղթ տեղական տանուտէրի կնքով, այդ խնդրի լուծումը թողնում է ժողովին։ Թէև ժողովը այն կարծիքի եկաւ, որ Միքայէլ Աստուածատուրեանի ընտրութիւնը շատ էլ օրինական պայմանների մէջ չէ կատարվել, որ այդ ընտրութիւնը կատարել է միայն վիճակի պատգամաւորների մի մասը, իսկ միւս մասը ամենևին չէ մասնակցել, բայց հարկաւոր համարեց ներողամիտ լինել և ընդունել այդ ընտրութիւնը, որպէս զի Շամշադինի վիճակը չը մնայ առանց ներկայացուցչի։ Ընդդիմութեան կողմն էր և պ. Ալ. Քալանթար, որ գտնելով հանդերձ ընտրութեան ոչ օրինական պայմանների մէջ կատարվելը, ներողամտութեան կողմն էր։ Ժողովը որոշեց ճանաչել Միքայէլ Աստուածատուրեանին (դաշնակցական) պատգամաւոր։

Նախագահութիւնը յայտնեց, որ մի քանիսների կողմից առաջարկութիւն կայ որոշել յետաձգել ուսումը բոլոր դպրոցներում մինչև սեպտեմբերի 15-ը, որպէս զի հնարաւոր լինի մինչև այդ պատրաստել դպրոցական նոր ծրագիրը և դպրոցները սկսեն ուսումը նոր ծրագրով և միւս կողմից բազմաթիւ ուսուցիչներ և հոգաբարձուներ, որոնք մասնակցում են ժողովին, իբրև պատգամաւորներ, ստիպված կը լինեն թողնել ժողովը և հեռանալ։ Երկար թեր և դէմ վիճաբանութիւններից յետոյ այս առաջարկը 28 ձայնով ընդդէմ 16-ի մերժվեց։

Կարճ ընդմիջումից յետոյ, նախագահը առաջարկեց բանաձևեր ներկայացնել։ Հետզհետէ խօսում են Բալայեան, Խզմալեան, Սաղաթելեան, Վարդապետեան, Քալանթար, Քաջազնունի և Աճէմեան։ Քալանթար ասաց մի երկար և պատճառաբանված ճառ, որ այստեղ առաջ ենք բերում։

### ՔԱԼԱՆԹԱՐԻ ՃԱՌԸ

Նախ և առաջ կարևոր եմ համարում նկատել, որ ես մանրամասն ծանօթ չեմ նախկին նիստերի պարապմունքների հետ, ուստի ինձ համար ներելի պէտք է լինի, եթէ ես այնպիսի բաներ ասեմ, որ կրկնութիւններ դուրս գան։ Սակայն ներկայ լինելով վերջին նիստերին ես կարծում եմ, որ կատարեալ կերպով ըմբռնել եմ տիրող տրամադրութիւնները և զանազան հայեացքների էութիւնը։

Մեր առաջ դրած են երեք հարց՝ դպրոցական, տնտեսական և թեմական-վարչական։ Բացի դրանցից ժողովականները իրանց կողմից առանձնապէս ասպարէզ են մղում հայկական ինքնօրինութեան և կալուածական հողերի բաշխման հարցեր։ Թուղէ կան դարձեալ նոր հարցեր, որոնք մտցրված են քննութեան հարցերի շարքը և որոնց մասին ես տեղեկութիւն չունեմ։ Ես կը խօսեմ ինքնօրինութեան հարցի մասին վերջումը. իսկ այժմ կը յայտնեմ մի քանի ընդհանուր խորհրդակցութիւններ մեր առաջ դրած հարցերի մասին։

Բայց նախ քան կը դիմեմ այդ հարցերին, ես կարևոր եմ համարում կանգ առնել այն կարծիքների և լուսաբանութիւնների վրա, որոնք լսվում են այստեղ քննվող հարցերի առիթով։

Լսելով այն ճառերը, որ երէկ և այսօր արտասանվեցին, ես կարևոր եմ համարում նկատել, որ իմ կարծիքով ճառախօսները շփոթում են միմեանց հետ մի քանի ազդեցութիւններ և ուղիղ չեն լուսաբանում երևոյթները։ Օրինակ կղերին այստեղ վերագրում են աւելի մեծ ներգործական դեր, քան նա կատարել է և կատարում է կեանքի մէջ։ Այնտեղ, ուր ազդեցութիւն են գործել և վճռող նշանակութիւն են ունեցել մտաւոր հասարակական հոսանքները, այստեղ հակված են տեսնել կղերի անմիջական գործունէութեան արդիւնքը։

Կղերը, որ մի ժամանակ գաղափարի անունով դարձել է գործօն կեանքի մէջ և որոշ բարերար հետևանքներ է առաջացրել, յետոյ դարձել է աւանդականութեան ներկայացուցիչ և ստացել է կաշկանդող ու թմրեցնող ոյժի բնաւորութիւն հասարակական զարգացման գործում։ Եւ որովհետև մենք մեր առաջադիմութեան շաւղում յատկապէս կղերից ոչ մի նոր բան չենք սպասում, ուստի և ղեկավարող ու առաջնորդող դեր այլ ևս չենք տալիս նրան։

Սակայն, ինչպէս ասացինք, կղերին էին վերագրվում այն, ինչ որ պատկանում էր հասարակութեան որոշ խմբերին։ Եթէ մի ժամանակ Յովսէփ Չերքեզեանը, յետոյ Մարկոս Աղաբէգեանը «Կռունկի» մէջ իր համախոհներով, իսկ յետոյ մեղուականների իրանց բաւական ստուար խմբով առաջ բերին մի ուղղութիւն և մի շարժում, որ կրում էր պահպանողական-կղերական բնաւորութիւն։ Դա կղերականների գործ չէր։ Այդ մարդիկ աշխարհականներ էին, բայց նրանց քաղաքական-հասարակական մտածողութիւնը տուել էր մի առանձին նշանակութիւն լուսաւորչական կրօնին և հայ կղերականութեան։ «Կռունկը» կարծում էր, որ ամեն մի հասարակական գործօնի նշանակութիւնը պէտք է գնահատվէր լուսաւորչական դաւանութեան հեղինակութեամբ։ Դա մարդկանց որոշ մտածողութեան արտայայտութիւն էր։ Նրանք կարծում էին, որ միայն կրօնի միջոցով կարելի էր ապահովել հայի ներկան և ապագան։ Եւ այդ մարդիկ չը լինելով կղեր, իդէօլօգներ էին կղերի դերին։ Նոյնիսկ նրանցից մէկը, որ ներկայումս կղեր է և եպիսկոպոս, իր աշխարհական ժամանակ կարելի է ասել աւելի կղերական էր, քան ներկայումս, երբ քաղաքական կեանքի պայմանները ենթարկվել են փոփոխութիւնների։

Այդ ուղղութեան հետ միաժամանակ գործում էր մի ուրիշ ուղղութիւն—«Հիւսիսափայլի» և «Մշակի», որը որոնում էր մեր ժողովրդի հասարակութեան փրկութիւնը ուրիշ գործօնների մէջ։ Անցան ժամանակներ և շատ բան պարզվեց։ Ազատամիտ հոսանքների քարոզը շատ բան պարզեց։ Իսկ մեր հարևան վրացի ազգը, որ չունէր ոչ ուրոյն եկեղեցի, ոչ եկեղեցական կալուածքներ, այլ միայն անձնուիրաբար մտաւ կուլտուրական գործունէութեան ասպարէզը, ապացուցեց, որ կարելի է նախանձելի առաջադիմութիւն կատարել և չունենալով այն գործօնները, առանց որոնց մեր կղերականութեան իդէօլօգները կարծում էին թէ ժողովուրդը կուլտուրական ապագայ չունի։ Վրացիները, յենվելով կրթութեան, մամուլի, ժողովրդական մասսաների գիտակցութեան վրա, առաջ բերին մտաւոր և հասարակական շարժումներ, որոնք մի քանի կէտերում բարձր են, քան ինչ որ մենք ենք արդիւնաբերել։

Դա ցոյց է տալիս, որ ծանրութեան կէտը կղերական մտածողների կողմից լաւ չէր ըմբռնված և հասարակական առաջադիմութեան գաղտնիքը չէր բացված նրանց համար։ Իսկ այժմ, երբ նաև մի ուրիշ մեծ երևոյթ յայտնվեց մեզանում, երբ հասան մեր երկրին ազատագրական շարժման ալիքները, պարզվեց, որ երբ ազատ քաղաքացիական կեանքը ստանայ իրականութիւն, միանգամից կը լուծվեն մեր առաջ դրված շատ ծանր հարցեր։

Մեր հասարակական ծառայութիւնը, մեր հասարակական հիմնարկութիւնները պէտք է աշխարհականացնել—դա այն հիմնական սկզբունքներից մէկն է, որը պէտք է դառնայ հիմք մեր կուլտուրական կեանքի։ Կրօնը կը մնայ, իբրև իրական կեանքի մի երևոյթ, որի վերաբերութեամբ ժամանակակից մեր ժողովուրդը ունի իր որոշ պահանջները։ Այստեղ մի պատգամաւոր՝ Փափազեանը ամենածանր ածականներով օժտեց կրօնի գոյութիւնը և հրապարակեց նրան կատարելապէս վնասակար, բայց միևնոյն ժամանակ նա իր ճառի վերջում առաջարկեց նրան դասաւանդել դպրոցներում, սկսելով Յիսուսի կեանքից և վերջացնելով կրօնական փիլիսոփայութեամբ։ Մենք քննութեան չենք ենթարկի այդ հակասութիւնը, բայց կընդգծենք, որ իբրև իրական երևոյթ, մեր առաջ դրած է ժողովուրդը իր որոշ կրօնական պահանջներով և մենք միայն պէտք է որոշենք կղերի տեղը մեր կեանքի մէջ։

Ահա այն հարցերից մէկը, որ դրված է ժողովի առաջ—որոշել այդ տեղը, որոշել յարաբերութիւնները։

Հիմնական սկզբունքը, որի վրա պէտք է կանգնած լինենք մենք, դա այն է, որ կուլտուրական գործերի տէրը ու տնօրէնը ժողովուրդն է իր ներկայացուցիչներով։ Այդ սկզբունքը պէտք է իշխէ թէ դպրոցական գործերի, թէ կալուածական խնդիրների կարգաւորման և թէ վարչական կազմակերպութեան ծրագիրների վրա։

Ժողովուրդը իր գերիշխանութիւնը և մասնակցութիւնը արտայայտում է ընտրական գործողութիւնների և վերահսկողութեան միջոցով, որոնք պէտք է իրագործվեն թէ բարձր և թէ ստորին աստիճաններում։ Այսինքն, թէ բաւական չէ ընտրել մի կենտրոնական պաշտօնեայ և յետոյ կարծել թէ նա իբրև ընտրեալ կը մնայ միշտ իր կոչման բարձրութեան վրա։ Պէտք է զուգընթաց ունենալ և ժողովրդական վերահսկող ու կարգադրող մարմիններ, ընտրված ժողովրդից։ Այդ եղանակով միայն կարելի է ապահովել ժողովրդի հարազատ մասնակցութիւնը և գերիշխանութիւնը։ Եթէ չը լինի, օրինակ, ընտրված հոգաբարձութիւն թեմական դպրոցի համար, դպրոցի վերահսկողութիւնը յանձնված լինի մի թէկուզ ընտրված առաջնորդի, դպրոցը անշուշտ չի առաջադիմի և ընտրվածը, ղեկավարողը շատ հեշտ կարող է միահեծան հրամանատարի դերի մէջ ընկնել։

Այստեղ պէտք է նկատեմ, որ պատգամաւորներից մի քանիսը խառնում են սօցիալական կարգի հարցերը մասնաւոր հասարակական հարցերի հետ։ Օրինակ, ակնարկելով ֆեդերացիայի կազմակերպութեան վրա, ենթադրում են, որ նրա հետ անհրաժեշտօրէն և տրամաբանօրէն շաղկապված են ամենածայրահեղ ազատամիտ հասկացողութիւններ բոլոր հարցերի մասին։ Մենք երկար կանգ չենք առնի այս հարցի վրա, այլ կը յիշեցնենք մի փաստ, որ Միացեալ-Նահանգները, չը նայելով այն հանգամանքին, որ վաղուց է ինչ ունեն ֆեդերատիվ կամ դաշնակցական կազմակերպութիւն, դեռ նորերս, մի 40 տարի սրանից առաջ ունէին ճորտատիրութիւն։ Ֆեդերացիայի մէջ շատ յաճախ մենք պատահում ենք շատ կրօնական համայնքների, նոյնիսկ կղերական առանձին ձգտումներով։

Խօսելով ժողովրդական կրթութեան մասին, պատգամաւոր Զաւարեանը յայտնեց ցանկութիւն, որ արհեստագիտական ուսումը մտցնվի բոլոր տարրական դպրոցներում։ Ես ինքս որոշ մասնագիտութեան տէր եմ և շատ լուրջ զբաղվել եմ արհեստների տարածվելու հարցով և շատ ուրախ կը լինէի, որ աջողվէր մեծ զարկ տալ նրա զարգացման. բայց գտնում եմ, որ Զաւարեանի առաջարկը անիրագործելի է։ Արհեստի ուսուցումը պէտք է կատարվի լուրջ և հմուտ կերպով։ Որտեղից մենք կարող ենք գտնել այնքան մասնագէտներ, որոնք կարողանային իսկապէս ղեկավարողներ հանդիսանալ ներկայ գործում. իսկ եթէ արհեստը պէտք է վատ սովորեցնվի, աւելի լաւ է նրան չը սովորեցնել բոլորովին, որովհետև երբ մի անգամ վարկաբեկ է լինում մի գործի անունը, այնուհետև այլ ևս ժողովուրդը հաւատ չէ ընծայում նոր փորձերի և առաջարկութիւնների։ Ես կարող էի իբրև օրինակ յիշեցնել Ախալքալաքի և ուրիշ դպրոցներին կից սարքած անյաջող գիւղատնտեսական փորձերը, որոնցով վայր է ընկել ժողովրդի աչքում գիւղատնտեսական բարւոքումների փորձերը։ Արհեստագիտական ուսումը չէ կարելի ընդհանրացնել բոլոր դպրոցների համար։ Հիմնական ժողովրդական դպրոցը պէտք է մնայ տարրական, որին և աւելացնվի, որ կարելի է, արհեստագիտականը։ Տարրական ուսումը ինքն ըստ ինքեան մի մեծ գործօն է։ Գրագիտութիւնը մի զէնք է, որով պէտք է զինել ժողովրդին։ Ճիշտ է գրագիտութիւնը դեռ ամեն բան չէ և նրա հետ միասին պէտք է զարգանան գրքերի հրատարակութիւնները, մամուլի զարգացումը, արհեստների ուսուցումը և ընդհանուր կեանքի բարեփոխութիւնները, որպէս զի գրագէտ մարդը կարող լինի լայն չափով օգտվել գրագիտութիւնից, բայց այն, ինչ որ նա կը տայ, այն էլ խթան կը լինի ապագայ զարգացման համար։

Պատգամաւորները խօսում են դպրոցական տուրք սահմանելու հարցի մասին. սահմանում են որոշ տուրքեր, որ պէտք է վճարէ ժողովուրդը։ Սակայն դա այն հարցերից է, որ դժուար կարելի է իրագործել կեանքի մէջ ներկայումս։ Ի հարկէ իւրաքանչիւր համայնք իր ներքին սեփական պէտքերի համար կը տայ որոշ տուրք. բայց որ գիւղացին տայ տուրք ընդհանուր պէտքերի համար, դա կարելի է իրագործել միայն կառավարութեան, Պետական Դումայի միջոցով։ Եւ այժմ նրան առաջ մղելը գործնական նշանակութիւն չունի։

Կալուածական հարցի վերաբերութեամբ իմ տեսակէտը հետևեալն է. էջմիածնին և վանքերին իրաւաբանօրէն պատկանող մեր կալուածները ամենևին վանքական չեն ըստ էութեան, ուստի նրանք չեն կարող մտնել վանքական կոչված հողերի ցուցակի մէջ։ Նրանք կազմում են մեր համայն ժողովրդի սեփականութիւնը։ Նրանցից ստացած արդիւնքները ծառայել են և պէտք է ծառայեն հայ ժողովրդի կրթական և կուլտուրական պէտքերի համար։

Ես կողմնակից եմ այն հայեացքի, որ հողերը պէտք է յետ գնվեն պետութեան միջոցով, իսկ գիւղացիները պէտք է հողը ստանան ձրիապէս։

Ուստի պետութիւնը պէտք է յետ գնի մեր ազգային կալուածների այն հողերը, որոնք վարուցանքսով են բռնված և գիւղացու անմիջական տրամադրութեան տակ են, իսկ նրանցից դուրս գտնված հողերը՝ անտառները, հանքերը, արօտները կը կազմեն յատուկ տնտեսութիւն, որի արդիւնքը կը գործադրվի մեր կուլտուրական նպատակների համար։

Այդ հարցը կարող է վճռվել միայն Պետական Դումայի միջոցով, որովհետև նա պէտք է կարգադրէ օրէնսդրական ձևով հողերի պետականացումը յետ գնման միջոցով։ Իսկ եթէ պետութիւնը ինքը չի վերցնի իր վրա այդ ծանր պարտականութիւնը, այն ժամանակ հայ ժողովուրդը կովկասեան հարևանների հետ միասին, կամ ինքը առանձին, պէտք է քննութեան ենթարկէ խնդիրը։ Դա ապագայի գործ է և յամենայն դէպս ներկայ կենտրոնական ժողովը իրաւասու չէ հողերը նուիրել ում և իցէ, քանի որ չեն քննված հիմնական խնդիրները Պետական Դումայում։

Ռուսահայ ժողովուրդը, ընտրելով պատգամաւորներ ներկայ կենտրոնական ժողովի համար, ամենևին չէր կարող ենթադրել որ այստեղ կարող է հարց լինել ազգային կալուածների ընծայաբերութեան մասին։ Այդպիսի խնդրի լուծման համար պէտք է նորից դիմել ընտրող ժողովրդին։

Այժմ կը խօսեմ ինքնօրինութեան հարցի մասին, որը իբրև կարմիր թել անց է կացած մի քանի խօշոր ճառերի միջէն։

Նախ և առաջ պէտք է յայտնեմ, որ դա չափազանց կարևոր և պատասխանատու մի հարց է, խօշորը բոլոր հարցերից, որոնց մասին յիշատակվում է ներկայ ժողովում։ Այո նա խօշոր և ընդարձակ է, մինչդեռ նա նոյն իսկ չէ դրված իբրև առանձին հարց կենտրոնական ժողովի քննութեան առարկաների ցուցակի մէջ։

Ժողովուրդը, որ ուղարկել է մեզ այստեղ, գիտէ, որ մենք պէտք է խօսենք դպրոցական, տնտեսական և թեմական-վարչական հարցերի մասին. բայց թէ այստեղ պէտք է քննութեան ենթարկվեն ռուսահայ ամբողջութեան կամ Կովկասի ինքնօրինութեան և կամ վերջապէս ազգային կալուածների ընծայաբերութեան խնդիրները—այդ ոչ ոք չէ իմացել և ժողովուրդը ոչ մի բանաձև չէ քննել։

Քննելով խնդիրը, դուք պէտք է յայտնի որոշում կայացնէք։ Հարց եմ տալիս. միթէ այդ ձեր որոշումը կարող է համարվել հայ ազգի ձայնը. միթէ նա կարող է հաշուի առնվել պետութեան կամ Պետական Դումայի կողմից։ Ոչ և ոչ։ Ռուսահայ ժողովուրդը ձեր ընտրութեան ժամանակ աչքի առաջ չէ ունեցել այդ հարցը և ձեզ չէ ապսպրել այդ հարցով զբաղվելու։ Եթէ մենք ցանկանում ենք ժողովրդի հարազատ ներկայացուցիչ լինել, ի չար չը գործ դնենք նրա վստահութիւնը դէպի իր լիազօրները։

Այդ մէկ։

Երկրորդ, յիշեցէք, որ մեր ժողովուրդը անցեալ տարի իր պատգամաւորների միջոցով ազգային համագումարում, որ տեղի ունեցաւ Թիֆլիսում, կայացրեց Կովկասի ինքնավարութեան վերաբերութեամբ մի բանաձև, որը հայերի կողմից մատուցվել է կովկասեան Փոխարքային մինիստրների խորհրդին ներկայացնելու համար։ Այդ բանաձևը հետևեալն է.

Մտցնել Անդրկովկասում տեղական անդասային ինքնավարութիւն լայն սկզբունքներով, հիմնելով ա) ինքնավար մանր զեմստւոյին միութիւն, բ) գաւառական (առանց նահանգականի) զեմստւօ, առանձնացնելով քաղաքային ինքնավարութիւնները իբրև առանձին միութիւններ և գ) մի համաանդրկովկասեան զեմստւոյին ժողով, որ իրաւունք պիտի ունենայ օրէնքներ առաջարկելու և նախօրօք քննելու Անդրկովկասին վերաբերեալ բոլոր օրէնսդրութիւնները։

Դա պատմական մի փաստ է, քաղաքական մի գործողութիւն, որ դուք չէք կարող բացասել։

Ռուսահայ ժողովուրդը գաւառներում քննել է այդ բանաձևը և իր հաւանութիւնը։

Եւ նա երբէք չէր կարող կարծել, որ նրա լիազօրները առանց ժողովրդի գիտութեան, առանց նրա կարծիքի և քուէի, ձեռնամուխ կը լինեն նոր բանաձև մշակելու հարցով, որպէս զի յետոյ այդ բանաձևը գործ դնեն զանազան նպատակների համար հայ ժողովրդի անունից։

Երրորդ, հարցնում եմ ձեզ, ինչու չէք այդ հարցը սկզբից դրել պարզօրէն, բացայայտ և նրան այժմ էլ առաջ էք մղում կողմնակի ճանապարհներով, «բիկօչիտով», «սուրդինկայի» տակ։ Նա խօշորագոյն հարցն է կենտրոնական ժողովի պատգամաւորների ճառերում, շատերը ամեն բան ձգում են դէպի ինքնօրինութիւնը և կամ ուզում են բղխել նրանից, բայց նրան առաջ են մղել իբրև մի կողմնակի պատահական հարց։ Դա այն վերաբերմունքը չէ, որ մենք պէտք է ունենանք դէպի մեզ ընտրող ժողովուրդը։

Եթէ անցեալ տարի աջողվեց մեզ այն մարդկանց, որոնց դուք անուանում էք ոչ յեղափոխական, համագումար ժողովել և ոչինչ չը թողնել հասարակութիւնից քննվելիք առարկաների մասին, եթէ մենք տուինք ժողովրդի ձեռքը մի հարցերի ցուցակը և յետոյ ընտրութիւններ կատարեցինք, ինչու այս տարի դուք, որոնցից շատերը «յեղափոխական» անունն են ուզում իրանց յատկացնել, քօղարկված կերպով են առաջ մղում այնպիսի մի հարց, որը չափազանց պատասխանատու է իր էութեամբ։ Եթէ մենք Բուլիգինի օրերում կարելի համարեցինք այնքան համարձակ լինել, որ այդպիսի մի հարց դրինք բաց ու ակներև, միթէ դուք այժմ ազատագրական շարժման մեծ արտայայտութիւններից, մտքի և խօսքի համեմատական ազատութեան օրերում պէտք է թաքցնէիք ժողովրդից մի հիմնական հարց, որի քննութիւնը այժմ զանազան պատրուակներով ուզում էք հերթական քննութեան հարցերից մէկը շինել։

Դուք չունէք այդ իրաւունքը։

Եւ վերջապէս ինչ մի արգելված հարց է ինքնավարութեան հարցը։ Այժմ բոլորը ասում, խօսում են նրա մասին։ Ինքը հարցը ընթացիկ հարցերից մէկն է և ի հարկէ մենք էլ կարող էինք այստեղ երբեմնակի շօշափել նրան, որպէս զի յարմարեցնենք մեր քննութեան առաջարկած գործերը և քայլերը այն հեռանկարի հետ, դէպի որը մենք գնում ենք։ Բայց միայն այդքան։ Իսկ ժողովրդի անունից յատուկ որոշում կայացնել նրա ապագայ քաղաքական կազմակերպութեան մասին մենք լիազօրութիւն չենք ստացել։

Չորրորդ, չը պէտք է մոռանալ, որ մենք այս երկրում ապրում ենք խառն ուրիշ ազգերի հետ և որ մենք մեր կենցաղականները չենք կարող սահմանել բոլորովին անկախ մեր հարևաններից։ Մինչդեռ այստեղ խօսում են միայն հայ ինքնօրինութեան մասին։ Անցեալ տարվայ համագումարը մշակել էր մի այնպիսի բանաձև, որի մէջ նա նախատեսել է իր հարևաններին, բայց այստեղ մենք լսում ենք միայն հայի ինքնօրինութեան մասին։ Եւ անկասկած նրան իրագործել չենք կարող առանց ուշադրութեան առնելու մեր հարևաններին։ Իսկ եթէ կը փորձենք այդ անելու [illegible] յեղափոխական ճանապարհով, մենք կարող ենք հանդիպել այնպիսի աղէտների, որոնց մասին այժմ մտածել էլ չենք կարող։

Եւ վերջապէս, հինգերորդ, միթէ դուք չէք նկատում, որ այստեղ ժողովվածներդ դեռ ոչ մի որոշ հայեացք չէք իրացրել ինքներդ, չէք մշակել բանաձև։ Ճառախօսները ակնարկներով գնում են մեր առաջ ինքնավարութեան մի քանի ձևեր, իբրև ցանկալիներ։ Տերրիտօրեալ (միավայր), էկստերտօրիալ (արտավայր), ֆեդերատիվ (դաշնակցական), ինքնօրէն կազմակերպութիւնները խառնված են մի անօթի մէջ և չէ մշակվել մի խելացի բանաձև, որ ինքն իրան պաշտպանէր և վստահէր հետևողների բազմութիւն։ Քաղաքական աջող ֆօրմուլաները վարակիչ են։ Իսկ մեր առաջ նոր ֆօրմուլա չը կայ և մինչև այժմ մնում է հինը, որ մշակել է անցեալ տարվայ համագումարը։

Եւ այդպէս ինքնօրինութեան հարցը մտցրված լինելով բռնազբօսիկ կերպով, առանց ժողովրդի գիտութեան, դառնում է մի բոլորովին մասնաւոր խնդիր մասնաւոր խորհրդակցութեան համար։ Ոչ մի որոշում այդ հարցի վերաբերութեամբ իրաւունք չունէք հրատարակել իբրև ռուսահայ ժողովրդի ազգային ձայն։

Այնպիսի հարցեր, ինչպէս են ինքնօրինութեան, կալուածների բաշխման, տուրքերի հաւաքման, դիֆֆերենցիալ ռենտայի սահմանման հարցերը չեն կարող լուծում ստանալ էջմիածնում. նրանց որոշումը կարող է տալ միայն Պետական Դուման և ընդհանուր պետական ազատագրական շարժումը։ Պետական Դուման կը վճռի և շատ ուրիշ ընդհանուր հարցեր, որոնց արձագանքները լսվում են այստեղ։ Օրինակ պատգամաւոր Աւետիսեան յայտնեց, որ նրանց շրջանում միտք է յղացել կազմելու անկախ էջմիածնից դպրոցական ֆոնդ կրթութիւն տարածելու համար գաւառում։ Միթէ այստեղ չէք նկատում զեմստւօի գաղափարի էութիւնը։ Մի ուրիշը կարող է բերել մեզ օրինակ թէ ինչպէս տեղական միջոցներով հրաւիրել են բժիշկներ, ուղղել են ճանապարհներ և այլն։

Դրանք զեմստւոյին գործունէութեան նախաքայլերն են։ Եւ անկասկած, երբ մեր երկրին կը տրվի զեմստւօ ընդարձակ իրաւունքներով, միանգամից կը լուծվեն շատ մասնաւոր հարցեր, որոնք առանձնակի այժմ հանդէս են բերվում։

Ազատագրական շարժումը իր ընդարձակ ալիքներով և Պետական Դուման իր օրէնսդրական հեղինակութեամբ պէտք է բանան ազատ գործունէութեան դռներ հասարակութեան համար։

Իսկ մեր առաջ այստեղ դրված է միայն մի ժամանակաւոր յանձնարարութիւն—կարգաւորել մեր ընթացիկ դպրոցական, տնտեսական և վարչական գործերը մինչև այն օրը, երբ մենք կարող կը լինենք աւելի կատարեալ և ընդարձակ կարգեր հաստատել մեզ համար։ Ե՞րբ կը լինի այդ օրը, արդեօք մէկ, թէ երկու, հինգ, տասն տարիներից յետոյ, այդ մենք չը գիտենք։ Ժողովուրդը սակայն ունի գործունէութեան թէև ոչ լիակատար, այնուամենայնիւ արդիւնաւէտ գործունէութեան ասպարէզ։ Ահա և մեր պարտաւորութիւնն է օգնել ժողովրդին խելացի կերպով լուծելու իր առաջ դրած հարցերը։

Դա ժամանակաւոր գործի բնաւորութիւն ունի, բայց եթէ այդ էլ մենք լաւ կազմակերպենք, պատրաստած կը լինենք մեր ժողովուրդը ապագայ կարգերի իրացման համար։

Չը պէտք է մենք մեզ խաբենք և բառերով մեզ օրօրենք։ Մեր առաջ դրած են ռէալ, իրական հարցեր, որոնք սպասում են մեր պատասխանին։

## ԴՈՒՔ ԴԵՌ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ ԷՔ

«Զանգ» թերթի վարիչները չեն դադարում զբաղվել սուտ պրովօկացիայով, որ նրանք, երևում է, արհեստ են շինել իրանց հակառակորդների դէմ կռւելու համար։

Երէկ, մենք, իբրև նմուշ այդ սուտ պրովօկացիայի և զրպարտութեան, առաջ բերինք Տաճատ վարդապետի հեռացնելու դէպքը, որ «Զանգը», առանց խղճահարվելու, առանց քաշվելու, համարում է արդիւնք էջմիածնի ժողովի օպպօզիցիօնական խմբի մատնութեան։ Մենք յայտնեցինք, որ «Զանգի» վարիչներին լաւ յայտնի են Տաճատ վարդապետի դէմ եղած կարգադրութեան պատճառները. Նրանք շատ լաւ գիտեն, որ Տաճատ վարդապետը պատասխանատւութեան է ենթարկվել ժանդարմական վարչութեան կողմից շատ վաղ, քան էջմիածնի ժողովի համագումարը։ Իբրև ապացոյց այդ իրողութեան, առաջ ենք բերում «Тиф. Лис.» լրագրում (№ 185) տպված հետևեալ լուրը, որ քաղված է պաշտօնական աղբիւրից.

«Երևանի իշխանութիւնների կարգադրութեամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսի դիւանապետ Տաճատ վարդապետին, որ այս տարվայ յուլիս ամսում դատի էր ենթարկված Երևանի ժանդարմական վարչութեան կողմից քաղաքական գործի համար, առաջարկված է երեք օրվայ ժամանակամիջոցում հեռանալ կայսրութեան սահմաններից»։

Ուրեմն, դեռ այս տարվայ յուլիս ամսին, երբ ոչ մի պատգամաւոր չէր ընտրված, հետևաբար, ոչ մի բլօկ էլ չէր կարող կազմված լինել, Տաճատ վարդապետը քննութեան տակ է եղել և նրա աքսորումը հետևանք է այդ քննութեան։ Մենք պատգամաւորներս էջմիածին հաւաքվեցինք օգոստոսի 14-ից սկսած միայն. օգոստոսի 15-ին, երբ առաւօտեան պատգամաւորները մասնաւոր խորհրդակցութեան էին գումարվել և սպասում էին Տաճատ վարդապետին իբրև դիւանապետի, որ գար և տեղեկութիւններ հաղորդէր ժողովի բացման մասին, նա շատ ուշացաւ. երբ, վերջապէս եկաւ, յայտնվեց, որ նա ուշացել է այն պատճառով, որ ժանդարմական վարչութիւնն էր կանչվել և հարցաքննութեան ենթարկվել։

Այս ամենը շատ լաւ գիտէին «Զանգի» վարիչ պատգամաւորները և, սակայն, նրանք չամաչեցին, աղաւաղելով ակնյայտնի ճշմարտութիւնը, ներկայացնել Տաճատին ինչ որ մի մատնութեան զոհ, այն էլ իրանց կարծիքով բլօկ կազմած մի քանի պատգամաւորների մատնութեան զոհ։ Դրանով, նրանք երկու նպատակի էին ձգտում. նախ, անուանարկել իրանց հակառակորդներին և գրգռել ժողովուրդը նրանց դէմ. երկրորդ, Տաճատ վարդապետին, որ ամենքին յայտնի է թէ ինչ բարի պտուղ է, մի հերոս դարձնել։

Այդ նպատակին նրանք չը հասան և հասարակութիւնը, անշուշտ, ըստ արժանւոյն կը գնահատէ այն մարդկանց, որոնք գաղափարական կռւի մէջ դիմում են այդպիսի զէնքի իրանց հակառակորդների դէմ։

Կարծում էինք, որ մեր հակառակորդները զղջանով և կը բաւականանան։ Բայց սխալվում էինք։ Նրանք շարունակում են իրանց պրովօկացիան և «Զանգի» երէկվայ համարի (№ 16) առաջնորդողով աշխատում են գրգռել հասարակութիւնը այն 3 պատգամաւորների դէմ, որոնք հրատարակեցին «Մշակի» № 187-ում տպված կոչը։ Այդ կոչը, որ հիմնված է ամբողջովին իրականութեան և ճշմարտութեան վրա, նրանք համարում են պրովօկացիա, իսկ զանազան մութ ակնարկներով, նաև մատնութիւն։

Կռւի այս ձևը վաղուց փորձված և արդէն ժանգոտված ձև է։ Դա այն ձևն է, որ տասնեակ տարիների ընթացքում գործ էին դնում մեղուական-կղերական-նորդարական-լումայական կուսակցութիւնները «Մշակի» և մշակականների դէմ։ Երբ Գ. Արծրունին յարձակվում էր Մանկունու դէմ, մերկացնում էր էջմիածնում գործվող չարաշահումները, մեղուականները գոռում էին. «մատնութիւն, դաւաճանութիւն»։ Երբ մշակականները կամեցան վերականգնել Հրատարակչական ընկերութիւնը և նրա նախկին վարիչների՝ ապօրէն գործունէութիւնների դէմ գանգատվեցին նահանգապետին, նոր-դարականները գոռում էին. «մատնութիւն»։ Երբ կառավարութիւնը աքսորեց Սուքիաս, Ներսէս եպիսկոպոսներին, Նահապետ, Տէր-Գրիգորեան վարդապետներին, կղերականները և նոր-դարականները դարձեալ գոռում էին. «մատնութիւն, Երեմիա և Արիստակէս եպիսկոպոսները մատնեցին»։ «Մեղուի», «Նոր-Դարի», «Լումայի» երգը այժմ կրկնում է «Զանգը» և գոռում. «մատնութիւն. Տաճատ վարդապետին մատնեցին մեր հակառակորդները»։ Եւ մեղուական-նորդարական-կղերական այդ բլօկին մնում է «զանգականը», որ ուրիշ զէնք չէ գտնում իր հակառակորդների դէմ, քան մեղադրել նրանց մատնութեան մէջ, պրովօկացիայի մէջ։

Պրովօկացիա և մատնութիւն է՞ այն, ինչ որ հրապարակով, օր ցերեկով կատարվում և ասվում է. միթէ ձեր իսկական պատկերը մերկացնելը, ձեր դիմակը պատռելը պրովօկացիա և մատնութիւն է։ Միթէ հարկաւոր ապացոյցներ չը կան մեր ասածներին ձեր դէմ. միթէ պարզ չէ, որ դուք ձգտում էք ձեռք ձգել ազգային-կուլտուրական հաստատութիւնները ձեր կուսակիցներին և արբանեակներին տեղաւորելու համար։ Միթէ դրա փաստաւոր ապացոյցը դուք չը տուիք Ներսիսեան դպրոցում. դուք, որ քիասչիների, դռնապանների պրոֆէսիօնալ միութիւններ էք կազմում և իբրև օրէնք դնում, որ ոչ մի քիասչի, դռնապան առանց միջնորդ դատարանի չը հեռացնվի, դուք այդ ձեր օրէնքը, սկզբունքը ժխտեցիք հայ ուսուցիչների համար և առանց որևէ միջնորդ դատարանի փողոց շպրտեցիք 4—5 ուսուցիչներ, քսան տարի և աւելի ծառայողներ ուսուցչական ասպարէզում, ընտանիքներով ծանրաբեռնված, պարզապէս նրա համար, որ նրանց տեղ դնէք ձեր կուսակիցներին, ազգականներին (հոգաբարձու Ամիրխանեան տեղաւորեց իր փեսային. հոգաբարձու Օհանջանեան՝ իր փեսային, իբրև կառավարիչ)։ Ինչով ղեկավարվեցիք, երբ հայերէն հազիւ մի քանի բառ դժուարութեամբ խօսող անձին նշանակեցիք ֆիզիկայի ուսուցիչ. կարո՞ղ է մի մարդ, որ հայերէն չը գիտէ, հայերէն դաս տալ։

Այո, պարոն զանգականներ, ժամանակ է, որ հայ ժողովուրդը բարձրացնէ պարսաւանքի և նշաւակութեան իր հզօր ձայնը ձեր դէմ, ինչպէս արդէն բարձրացրել է։ Ժողովուրդը սթափվել է, ազատվել է այն սոսկալի ահաբեկումից, որին ենթարկել էիք նրա միտքը, խիղճը, զգացումները։ Նա, հայ ժողովուրդը, այժմ կոչում է. «Հեռացէք, հեռացէք անարժաններ, ասպարէզից. բաւական է, ինչքան շահագործեցիք թշուառ հայ ժողովրդի գրպանը և զգացմունքները»։

Հ. Առաքելեան

## ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋԸ

—Ժողովրդական ազատութեան կուսակցութիւնը եռանդուն կերպով պատրաստւում է առաջիկայ համագումարի համար։ Այն տեղերում, ուր ադմինիստրացիան աւելի թեթև կերպով է վերաբերվում «Ստոլիպինի միջոցով իրագործվող ժողովների ազատութիւններին», մեծ ժողովներ են գումարվում։ Օրինակ մօտ օրերս Աստրախանում ժողովրդի ահագին բազմութեան առաջ խօսել է Կօկօշկինը։

Կադետները, միւս կողմից նախատեսնելով, որ խոշոր վտանգ է սպառնում իրանց կուսակցութեանը նախընտրական գործողութիւնների ժամանակ՝ սօցիալ-դեմօկրատների և սօցիալ-յեղափոխականների կողմից բանւորական լայն շրջաններում, աշխատում են Մոսկվայում և ուրիշ քաղաքներում զօրեղացնել իրանց «բանւորական խմբերը»։

—Չը նայելով Մոսկվայի ոստիկանութեան հաւաստիացումներին, Մոսկվայից հաղորդում են, որ սօցիալ-յեղափոխականների կուսակցութեան Մոսկվայի կօմիտէտը ամենևին կալանաւորված չէ, այլ կալանաւորութիւնները եղել են միայն «ընդդիմադիրների» մէջ։

«Н. Путь» ի ստացած տեղեկութիւններով, սօցիալ-դեմօկրատական կազմակերպութիւնների մօտ ժամանակներս տեղի ունեցած Սիբիրի, Սարատովի, Կօստրոմի, Պօլտաւայի և Մոսկվայի կօնֆերենցիաներում վճռված է անմիջապէս համագումար հրաւիրել մշակելու կուսակցութեան տակտիկան ներկայ մոմենտի համար առհասարակ և մասնաւորապէս Պետական Դումայի համար։

—Լեհական սօցիալիստ մամուլի մէջ շարունակում են իրար հետ խիստ բանակռւել լեհական սօցիալիստ կուսակցութիւնը մէկ կողմից և սօցիալ դեմօկրատները միւս կողմից՝ մասսայական տերրօրների հարցի մասին։

—Վարշաւայի լրագիրների մէջ հրատարակված տեղեկութիւններից երևում է, որ «Բունդի» կենտրոնական կօմիտէտը 1906 թւի յունիս և յուլիս ամիսների ընթացքում ժողովել է ընդամենը 35,000 րուբլի, որից ծախսել է 34,614 րուբլի։

—«Ռուսաց ժողովրդի միութեան» Ակկերմանի բաժանմունքը հեռագրով խնդրել է Թագաւոր Կայսրին հեռացնել պաշտօնից Եարօսլաւի արքեպիսկոպոս Եակօվին։ Այդ խնդիրքը նրանք պատճառաբանում են նրանով, որ արքեպիսկոպոսը վիրաւորական խօսքեր է ասել իրան ներկայացող ռուս ժողովրդի միութեան պատգամաւորութեանը և դրանով էլ վատ օրինակ է տուել իր ստորադրեալ հոգևորականներին, որոնք պարտաւոր են աջակցութիւն ցոյց տալ միութեանը կրամօլայի դէմ մաքառելու ժամանակ։

—Մի քանի օր սրանից առաջ Մոսկվայում կայացել է ժողովրդական ազատութեան կուսակցութեան Մոսկվայի քաղաքային կօմիտէտին կից կազմված արհեստակցական միութիւններ կազմակերպող մասնաժողովի նիստը։ Մասնաժողովը որոշել է աջակցել կազմակերպելու անկուսակցական արհեստակցական միութիւններ, միևնոյն ժամանակ կազմել ժողովրդական ազատութեան կուսակցութեան անդամների արհեստակցական խմբակներ։

—Մօտ օրերս տեղի է ունենալու հոկտեմբերի 17-ի միութեան կենտրոնական կօմիտէտի անդամների խորհրդակցութիւնը, որտեղ քննութեան պէտք է ենթարկվի միութեան նոր ծրագիրը և խաղաղ վերանորոգութեան կուսակցութեան հետ ձուլվելու հարցը։

## ՄՈՒՍՈՒԼՄԱՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԲԱՆԱՁԵՒԸ ՀԱՅ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Համառուսական մուսուլմանների համագումարը, որ տեղի ունէր Նիժնի-Նօվգօրօդում, օգոստոսի 21-ին վերջացրել է իր նիստերը։

Նիստերը փակելուց առաջ, համագումարը մի շարք բանաձևեր է ընդունել, որոնցից մէկը վերաբերում է յատկապէս հայ-թուրքական ընդհարումներին և առհասարակ Կովկասի անցքերին։

Ահա այդ բանաձևը. «Խորին վշտով մուսուլմանների համառուսական համագումարը լսեց Անդրկովկասում շարունակվող հայերի և թուրքերի ընդհարումների մասին ստացված տեղեկութիւնները։ Դեռ ևս անցեալ յանվար ամսում տեղի ունեցած 2-րդ մուսուլմանական համագումարի ժամանակ ջերմ ցանկութիւն էր յայտնված վերջ տալու այդ ընդհարումներին, որ հաւասարապէս կործանարար է երկու ազգութիւնների համար էլ։ Դժբաղդաբար Անդրկովկասի մի քանի կէտերում այդ ժամանակ հայ-թուրքական ընդհարումները բաւականին սուր բնաւորութիւն էին ստացել, ինչպէս օրինակ Շուշու, Զանգեզուրի գաւառներում և այլն։ Սարսափով մենք կարդում էինք լրագիրներում թէ ինչպիսի ամարդութեամբ էին վերաբերվում մուսուլմանների հետ, առանց խտրութեան սեռի և հասակի, նրանց տների, գոյքի, անասունների ջնջումը, մզկիթների սրբապղծելը։ Սրտի խորին ցաւով մենք լսում էինք թէ ինչպէս Շուշու թուրքական մասը և Շուշու ու այլ գաւառների ամբողջ շարք գիւղեր մատնվում էին թնդանօթային կրակի ու էկզեկուցիայի։ Դրա վերաբերմամբ մենք չէինք ուզում հաւատալ այն բոլորին, ինչ որ գրում էին ու խօսում, այն, պարզապէս, անարդարացի և աչառու գործողութիւնների մասին, որը թոյլ տուեց Շուշու և յիշեալ գիւղերի վերաբերմամբ գեն. Գօլօշչապօվը։ Բայց կովկասեան Փոխարքային ուղղված տեղական և հիւսիսային Կովկասի ու Դաղստանի մուսուլմանների անընդհատ գանգատների ու խնդիրքների համաձայն, որ նպատակ ունէր գեն. Գօլօշչապօվին հեռացնելու, մեզ համոզեցին, որ Շուշում և գաւառներում մեր եղբայրները զոհ են դարձել գեներալ Գօլօշչապօվի մուսուլմանների վերաբերմամբ արած խիստ անարդար ու աչառու կարգադրութիւններին։ Բողոքելով այդպիսի գործողութիւնների դէմ, համագումարը յոյս ունի, որ Փոխարքան, Շուշու քաղաքի և գաւառների մուսուլմանների արդարացի գանգատները ուշադրութեան առնելով, կը հեռացնէ ոչ միայն գեներալ Գօլօշչապօվին, այլ և այն բոլոր պաշտօնեաներին, որոնք իրանց աչառու գործողութիւններով թշնամութիւն են սերմանում ու պահպանում երկու հարևան ազգութիւնների մէջ, որ դարերից ի վեր ապրում էին իրար հետ հաշտ։ Բացի դրանից, համագումարը պարտք է համարում դիմել երկու ազգերի հոգևորական և աշխարհական ներկայացուցիչներին, մանաւանդ հայերի, որոնք ունեն ինտելիգենցիայի մեծ թիւ և բաւականաչափ միջոցներ, իր ձեռքը առնել անդրկովկասեան մուսուլմանների ու հայերի փոխադարձ հաշտութեան գործը և, յանուն մարդասիրութեան, յանուն Ռուսաստանի համայն ազգութիւնների ընդհանուր շահերի, որ պարունակվում է ազատագրական շարժման մէջ, վերջ տալ այդ փոխադարձ կռիւներին և միահամուռ ոյժերով նպաստել, որպէսզի քաղաքացիական և քաղաքական ազատութեան հիմքերի վրա հաստատվի խելացի կեանք»։

(«Т. Л.»)

## ՄՈՒՍՈՒԼՄԱՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ ՆԻԺՆԻ-ՆՕՎԳՕՐՕԴՈՒՄ

Վերջացաւ համառուսական մուսուլմանների համագումարը։ Ընդունված է «միութեան» ծրագիրը, որ մի փոքր աջ է կանգնում կադետներից։ Արմատական երիտասարդութիւնը ոչինչ է համարում միութիւնը տեսնելով նրա մէջ լոկ լուսաւորութեան նպատակ։ Ընտրված է միութեան կենտրոնական կօմիտէտը։ Նրա անդամները հետևեալներն են. Կազանից՝ Իւսուֆ Ակչուրին, Գաֆիդ Մախսուտով, Ալէյն-Արդուլ Ապանայեւ։ Պետերբուրգից՝ Րաշիդ Իբրահիմով, Բագայեւ։ Պարիզից՝ Էֆենդի Մախսուդով։ Ուֆայից՝ Գալիէվ, Սըրտլանով, Դեմչուրին։ Բախչիսարայից՝ Գասպրինսկի, Դաւրզովիչ։ Վիատկից՝ գրականագէտ Բումի։ Կիրգիզներից՝ Կուլչուգուլով. ընդամէնը 15 հոգի։

Համագումարը ցանկութիւն յայտնեց ընտրել 5 մուֆթիներ։ Եկեղեցու պետը պէտք է ապրի ոչ Պետերբուրգում, որպէսզի նրա վրա ճնշումներ չը լինի բիւրօկրատիայի կողմից։ Ցանկութիւն է յայտնվել, որպէսզի մօլլաները հոգ տանէին իրագործելու երեխաներին պարտադիր ուսում տալու լօզունգը։ Հեռագիրներ են ուղարկել պարսից Շահին, արտայայտելով իրանց խնդութիւնը երկրին քաղաքացիական ազատութիւն աւետող իր ֆիրմանի առթիւ, համարելով այդ պետական կեանքի ամենաճշգրիտ ուղին, որով կը պայծառանայ գեղեցիկ Պարսկաստանը։ Երկրորդ հեռագիրը ուղարկել են Ստոլիպինին, որով ցանկութիւն են յայտնում ռեպրեսսաները դադարեցնելու և արտակարգ օրէնքները փոխելու համար։ Ապա համագումարը, բացի արմատական երիտասարդութիւնից, կազմեց մի բանաձև կովկասեան Փոխարքային, խնդրելով հեռացնել գեներալ Գօլօշչապօվին, որ հայերի և թուրքերի մէջ թշնամութիւն է սերմանում, որից սաստիկ վնասվեցին թուրքերը, և ցանկութիւն յայտնելով յանձնել ժողովրդի հաշտութեան գործը թշնամի կողմերին իրանց։ Արմատականները կազմեցին առանձին իրանց բանաձևը, որ այդ թշնամութեան մէջ մեղաւորը կառավարութիւնն է իր բիւրօկրատիզմով հանդերձ։ Բանաձևը պահանջում է հայերից և թուրքերից միանալ ընդհանուր թշնամու դէմ կռւելու համար։

Հեռագիր են ուղարկել Հերցենշտէյնի այրիին, յայտնելով համագումարի ցաւակցութիւնը։

—«Нов. Путь» լրագիրը ստացել է հետևեալ հեռագիրը. «Մուսուլմանների համառուսական համագումարը որոշել է տպագրել ձեր յարգոյ լրագրում հետևեալ բանաձևը. «Մուսուլմանների համառուսական համագումարը Նիժնի-Նօվգօրօդում, խորապէս գայրացած Պետական Դումայի նախկին անդամ, այդ ֆինանսական և ագրարային հարցերի անփոխարինելի գիտակ, ժամանակակից կեանքի գաղափարական սկզբունքների անձնազոհ մարտիկ Հերցենշտէյնի գազանային սպանութեան համար, բարոյական պարտք է համարում հանդուցեալի այրիին արտայայտել իր անկեղծ ցաւակցութեան զգացմունքը։ Համագումարի նախագահ Ալի-Մարդան բէկ Թօփչիբաշէվ»։

## ՍԹԱՓՈՒՄԸ ՍԿՍՎԵԼ Է

Երբ դեռ այստեղ՝ Թիֆլիզի պատուիրակների ժողովում պ. պ. դաշնակցական լիդէրները սօց. դեմօկրատներն ու կադէտները ասում էին, թէ դուք բոլորովին ռէալական հողի վրա կանգնած չէք էջմիածնի ժողովում քննվելիք հարցերի վերաբերեալ, թէ դուք անիրագործելի օդային ամրոցներ էք ուզում կառուցանել, թէ ձեր առաջարկած հարցերի քննութեան ու որոշման տեղը (մի կողմ թողնելով այդ հարցերի սխալ ըմբռնումը) ոչ թէ էջմիածինն է, այլ Պետերբուրգը. երբ նրանց ասում էին, թէ մեր հոգևորականութիւնը իրապէս այնպիսի մի վիթխարի ոյժ ու զօրութիւն չէ ներկայացնում իրանից, որպէսզի հարկ և անհրաժեշտութիւն լինէր ներկայ ժամանակներում յեղափոխական սուր սլաքները ամենից առաջ մեր կղերի դէմ ուղղելու, որ բաւական է միայն՝ այդ կղերին պաշտպանող բռնապետական միապետութիւնը տապալվի, որպէսզի հոգևորականութիւնը խարխուլ շէնքի նման փլչի ու վայր թափվի. երբ նրանց ասում էին, մինչ միապետութեան տապալումը, նրանց բոլոր պահանջներն ու որոշումները, իրանց ամենամինիմալ կէտերի մէջ էլ մնացած պիտի մնան թղթի վրա, որովհետև դեռ կանգուն են պօլօժենիան, նրա վրա հսկող պրօկուրօրներն ու միւս բոլոր հիմնական հին ու փտած դրութիւնները։ Երբ այս բոլորը դեռ այստեղ՝ Թիֆլիսում (անշուշտ և գաւառներում) ասում էին դաշնակցականներին, պ. պ. լիդէրները ցասկոտ զայրոյթով էին լցվում և պատասխանում էին, թէ այդպէս բոլոր խօսողները կամ բուրժուաներ և «աշխատաւոր մասսաների» շահերի հակառակորդներ են և կամ «Դաշնակցութեան» փառքին ու ոյժին նախանձող չարակամներ, իսկ այդ բոլորն էլ միասին՝ «անմիտ դօնքիշօտներ»։

Նոյն առարկութիւնները և նոյն [illegible] պատասխանները տեղի ունեցան էջմիածնի համագումարի առաջին օրերում, երբ դեռ այնտեղ մասնակցում էին վեց ու կէս ոչ-դաշնակցական օպօնենտ պատգամաւորները։ Սակայն դրանք էլ շուտով հեռացան, ժողովի ասպարէզը կատարելապէս դաշնակցականներին թողնելով, որպէսզի նրանք իրանց պահանջների ու գծագրած ծրագրի վերաբերեալ վարվեն այնպէս, ինչպէս որ կարող էին վարվել իրանց կուսակցական համագումարում:

Եւ ինչ էք կարծում. «կոմիտակի» մարդկանց ժողովից հեռանալը ու «ախպերքին» առնուաստանը թաղելը չափազանց բարեբար ազդեցութիւն ունեցաւ լիդէրների վրա. նրանք, երես առ երես կանգնած մնալով իրանց «պաշտպանների» հանդիման, յանկարծ սթափվեցին իրանց քեալլագեօզութիւնից ու բաւականին լրջացան:

«Շատ գեղեցիկ, ախպերք, եկէք հիմա առնուաստանը խօսենք. այժմ, ի հարկէ, մենք ամենայն ազատութեամբ կարող ենք մեր ուզած ձևով էլ որոշել. բայց ախր մենք դեռ չենք մտածել ու չենք պարզել մեզ համար, թէ մեր կայացրած որոշումների գործադրողը ինչ մարմին պիտի լինի: Չէ՞ որ մի գործադիր կամ միջնորդ մարմին պէտք է ունենալ, որը կարողանայ և իրաւունք ունենայ տիրող կառավարութեան և հայ ժողովրդի միջև միջնորդի դեր կատարել: Քաղաքացիական մի ազդելի մարմին ստեղծել մենք չենք կարող բանակցական միասնութեան օրով, իսկ հոգևորականութեան թողնել նորից այդ միջնորդի պաշտօնը, դա անհետևողականութիւն կը լինի մեր կողմից, քանի որ մենք եկել ենք հոգևորականութիւնը բոլորովին դուրս վանդելու աշխարհիկ գործերի ասպարէզներից: Գոնէ մինչև վերջը մենք այդպէս էինք խօսում, միանգամայն մոռանալով, որ սկզբէս մեր հոգևորականութեանը այդպիսի մի զօրաւոր հակառակորդ երևակայելը դոնքիշոտութիւն է. նա այժմ ֆիկցիա է և վաղուց կորցրել է իր նշանակութիւնը: Ինչ էլ մտածենք, ընկերներ, այնուամենայնիւ մենք ստիպված ենք կոմպրոմիսներ անել կղերին, որովհետև մենք չենք կարող կրօնը վտարել դպրոցներից և կղերին չը տալ միջնորդի դեր»:

Ահա, մօտաւորապէս այն մտքերն ու արտայայտութիւնները, որ իսկոյն հրապարակ են եկել, երբ ժողովից հեռացան «կոմիտակի» պատգամաւորները: Ճիշտ է, դեռ գտնվել են այնպիսի «ընկերներ», որոնք էներգիայի ոյժով շարունակել են իրանց քեալլագեօզութիւնը ու մի բերան պնդել, թէ իրանք եկել են կղերին հայկական կեանքից վանդելու ու շատ ու շատ մեծ-մեծ գործեր կատարելու, բայց հաւատացած ենք, որ մի քանի օրից յետոյ դրանց օդային ամրոցների միրաժներն էլ կանհետանան և, իրանց մերկութիւնը զգալով, կը շտապեն նոյնպէս Փարաջանների մէջ փաթաթվել, ու այդ ժամանակ «ընկերների» ներդաշնակութիւնը դարձեալ կատարեալ կը լինի:

Շատ իզուր են ոմանք կարծում, թէ էջմիածնի պատգամաւորների մէջ երկու իրարու հակառակ հոսանքի դաշնակցականներ կան: Նրանց բոլորի արտասանած ճառերի ու արտայայտած աշխարհահայեցողութիւնների մէջ մենք գոնէ միմեանցից տարբերվող հոսանքներ բոլորովին չենք նկատում, կամ աւելի ճիշտ է ասել, և ոչ մի որոշ ու պարզ աշխարհահայեցողութիւն չը կայ այնտեղ, այլ կայ միայն մտքերի քաոս, աշխարհահայեցողութիւնների մի ընդհանուր խառնուրդ և անորոշ զանգուած: Իսկ միակ տարբերութիւնը, որ նկատվում է, լոկ այն է, որ ոմանք աւելի քեալլագեօզներ են, իսկ միւսները կեանքի փորձերից փոքր ինչ սթափվածներ ու մի քիչ լըրջացածներ: Իսկ այդպիսի չնչին տարբերութիւնը չէ կարող պատճառ լինել «ընկերներին» միմեանցից բաժանվելու, ինչպէս ոմանք են մտածում: Եթէ «ընկերների» մի մասը կարողացաւ սթափվել «կոմիտակի» մարդկանց կրիտիկայի ազդեցութեան տակ, միւս մասն էլ պէտք է յուսալ, շուտով կը սթափվի «ընկերների» կրիտիկայից: Իսկ մնացեալ ամենակատարի քեալլագեօզներն էլ անշուշտ կը սթափվեն ժողովը վերջանալուց յետոյ, երբ կը տեսնեն, որ իրանց ամենահամեստ «պահանջներն» էլ մնացած տառեր մնացին: Այդպէս է միշտ քեալլագեօզների վերջը:

Ռ.

## ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԲԱՑՄԱՆ ԱՌԻԹՈՎ

«Нов. Путь» լրագրի մէջ տպագրված է հետևեալը. «Օգոստոսի 25 ի առաւօտեան կայացել է Պետերբուրգի համալսարանի ուսանողների սօցիալ-դեմօկրատական ֆրակցիայի նիստը: Խորհրդածութիւնից յետոյ կազմվեց հետևեալ բանաձևը, որ յետոյ կառաջարկվի ընդհանուր ուսանողութեան համաժողովին. «Աչքառութեան առնելով, որ ուսանողական գործադուլը, որպէս պասսիվ բողոքի մի ձև, համապատասխանում է ռուսական յեղափոխութեան զարգացման ներկայումս հասած աստիճանին, որ համալսարանի բացումը, ինչպէս այդ ցոյց տուեց անցեալ տարին, մեծ դեր է խաղում յեղափոխական կռուի ապագայ զարգացման համար. որ ընդհանուր-յեղափոխական շարժման շահը պահանջում է համախմբել ուսանողութիւնը մեծ քաղաքներում և զէնքի կանչել նրան, իբրև յեղափոխական դեմօկրատիայի զօրամասերից մէկը,—համաժողովը որոշում է համալսարանը բացված համարել»:

Ցերեկվայ ժամը 2 ին, նոյն օրը, կայացել է Պետերբուրգի համալսարանի աւագների խորհրդի նիստը, որը տևել է մօտ 6 ժամ: Խորհուրդը վճռել է ընդունել սօցիալ-դեմօկրատական ֆրակցիայի մշակած բանաձևի նախագիծը: Իսկ աւագների խորհրդին ուղղված բոլոր հարցերին, վերջինս պատասխանել է հետևեալ ձևով.

«Ի նկատի առնելով, որ ներկայ յեղափոխական մոմենտում ակադեմիական պարապմունքները չեն հակասում յեղափոխութեան շահերին, աւագների խորհուրդը կարծում է, որ բուն քաղաքական փոխված վիճակը չէ պահանջում դադարեցնել ակադեմիական պարապմունքները, արգելառութիւններ չը կան ուսումը սկսելու համար այժմ»:

## ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԱԴՈՒԼԸ ԲԱԳՈՒՈՒՄ

—

Բագուի Ռ. Ս.-Դ. Բ. կազմակերպութիւնը օգոստոսի 24-ին մի կոչ էր ուղղել ազգաբնակութեան, առաջարկելով օգոստոսի 25-ից ընդհանուր երկօրեայ քաղաքական գործադուլ սկսել:

Գործադուլի պատճառը այն է, որ իշխանութիւնը միջամտում է նաւթահանքերի բանւորների խաղաղ տնտեսական գործադուլին, կալանաւորում է գործադուլ անողներին և վերջին միջնադէպը, որ տեղի է ունեցել ժանդարմների փոխարինի հետ:

Գործադուլը պէտք է լոկ խաղաղ բողոքի բնաւորութիւն կրէր:

Օգոստոսի 25-ի առաւօտեան գործադուլը սկսվեց:

Քաղաքը ամբողջապէս կանգ առաւ, բացի ծովային շրջանից, որը նախապէս նախազգուշացրել էր իր անպատրաստականութեան մասին:

Կանգնեցին ձիաքարշերը, փակվեցին կըրպակները:

Միաժամանակ շարժումը անցաւ նաւթահանքային և գործարանային շրջանները, ուր մեծ համակրութիւն գտաւ բոլոր ազգութիւնների բանւորների կողմից:

Ինչպէս երևում էր, գործադուլը պէտք է բռնկվէր ամեն տեղ և պէտք է շատ աջող լինէր, եթէ որ առաւօտեան ժամի 11-ին դուրս չը լողար մի բոլորովին անսպասելի նոր հանգամանք. «Դաշնակցութեան անհամակրանքը և նոյն իսկ թշնամական վերաբերմունքը դէպի գործադուլը»:

Այդ վերաբերմունքը առաջ էր եկել ոչ թէ տնտեսական կամ քաղաքական բնաւորութիւն ունեցող շարժառիթներից դրդված, այլ բացառապէս նեղ ուսակցական պատճառներից:

Ժամի 11 ին յիշեալ կուսակցութեան հետևողների առանձին խմբերը սկսեցին պատել կրպակները ու պահանջել, որ անմիջապէս բաց անեն:

Նրանց պահանջով էլ ձիաքարշը սկսեց բանել, նախ միայն 10 վագոններ, որոնց ուղեկցում էին խմբի ծառայողները. այսպէս ասած «ծառաբովցիները»:

Ճաշի մօտ գործադուլը քաղաքում համարեա խափանվեց և շարունակում էին միայն գերձակները, կօշկակարները, ատաղձագործները և պանդոկային ծառայողները:

Համարեա նոյն պատկերն էլ կրկնվեց նաւթահանքերի շրջանում:

Բոլոր ազգութիւնների սպասկանող բանւորների միահամուռ կերպով սկսած գործադուլը սկսեց փոքր առ փոքր կորցնել իր համերաշխութիւնը՝ հէնց որ հայ բանւորները հրահանգներ ստացան «Դաշնակցութիւնից»:

Համարեա բոլոր ռուս և մուսուլման բանւորները և հայերի մի աննշան մասը շարունակեցին իրանց գործադուլը մինչև վերջ:

Յաջորդ օրը կրկնվեց նոյնը, բայց աւելի ևս մեծ չափով, որովհետև այդ «ընդհանուր» գործադուլի անհամերաշխութիւնից տկարացած մասսան չը գիտէր ինչ անել:

Ոստիկանութիւնը համարեա բացակայ էր: «Գործողութեան» առանձին դէպքեր կային միայն, ինչպէս օրինակ Բալախանիում Կօկրեվի նաւթահանքը պատառներ կանչելը, բայց, ընդհանուր առմամբ, հարկաւոր է խոստովանել, որ գործադուլի խափանման ծառայութիւնը ոստիկանութեանը չէ վերաբերում...

«Баку»

## ԲԱՑ ՆԱՄԱԿ ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ԸՆԿԵՐՆԵՐԻՆ

(Նամակ խմբագրութեան)

Թիֆլիս, օգոստոսի 28-ին

Մեզ հասած տեղեկութիւններից երևում է, որ խմբապետ Միհրանը չը բաւականանալով «Մշակի» էջերում հրատարակած զաւեշտական, բայց միևնոյն ժամանակ կոկորդիլոսի կեղծ արցունքներով ծածկված նամակներով, շրջել է մի քանի գաւառներ՝ Էջմիածին, Երևան և այլն և այլն: Դաշնակցական ընկերների ու կոմիտակի մարդկանց հաւատացրել է, որ իբր թէ մենք ևս համակարծիք ենք իր հետ: Սրանով յայտնում ենք, որ մենք ոչ միայն համամիտ չենք Միհրանի և իր նմանների հետ, այլ համարում ենք նրանց վարմունքը յեղափոխական տեսակէտից, առանձնապէս տաճկահայ սրբազան դատի համար, վնասակար:

Այդ ի հարկէ կը հասկանան մեր մաքուր ու անձնազոհ յեղափոխական ընկերները, դաշնակցական դրօշակի իսկական պաշտպանները և նրանք զանազան Միհրանների որոգայթների առաջը կառնեն: Ուրեմն զգաստ եղէք, ընկերներ. հեռու մեզանից դաւաճանների պղտոր մտքերը, հեռու կեղծ յեղափոխականների սուտ խաղերը:

Բարձր է եղել մինչև այժմ Դաշնակցութեան վեհ դրօշակը և կը մնայ այսուհետև էլ կանգնած այդ բարձրութեան վրա, պիտի առաջ տանի տանջված հայ ժողովրդի արդար դատը: Գաղափարական համերաշխութեան օղակով կապված շարունակենք մեր սուրբ գործը: Ամօթ ու նախատինք ընկերական միութիւնը խախտողներին և երկպառակութեան սերմ ցանողներին: Ցանուցիր ընկած պաշտելի նահատակների թող հեռու մնան մեր շարքերից Միհրանի նման դաւաճանները:

Հաջի, Սեպուհ, Մխիթար, դաշնակ. Խեչօ

## ԿՈՉ ԸՆԿԵՐՆԵՐԻՆ

(Նամակ խմբագրութեան)

—

Ընկերնե՛ր. կարդալով «Մշակի» № 186-ում մեր ընկեր Համօյի և Խորէնի գրածներ գալիս ենք և մեր համաձայնութիւն տալու նրանց յայտնած մտքերին: Աւելացնելով և այն, որ մենք ոչ մի ժամանակ չունենք և ոչ մի սիրտ այսպիսի արիւնոտ օրերում, երբ մեզանից պահանջում են զինված դիմադրութիւն, լսել այն պրօպագանդիստների խօսքերը, որոնք գիտակից ոճով ճառում են մեզ սօցիալիզմից և պրօֆէսիօնալ ընկերութեան օգտակարութիւնից: Դրանց թւում թէ մենք բոլորս ալ անհասկացողներ ենք, և չենք կարող ըմբռնել, իրանց արտայայտած գաղափարների առաւելութիւնը: Մենք հակառակ չենք այդ նոր կարգերին. բայց սօցիալիզմական տեսակէտից կազմակերպվելու հակառակ ենք: Դեռևս անպատրաստ, պարագաները աննպաստ և մենք ալ անկարող ենք, քանի որ մեր առաջ և շուրջ միշտ կան բռնութիւններ, բռնաբարում և յափշտակում: Հարկաւոր է նախ մարդկային ամենատարրական իրաւունքներ ձեռք բերել բոլորիս համար, ապա դիմել աւելի լաւ կազմակերպութիւնների: Մենք չենք կարող ոչ մի ժամ մեր միտքն ու աչքն հեռացնել հայրենիքի հարազատներից, կարդալ ու չը յուզվել նրանց նամակներ, և նուիրվել աւելի բարձր գործերի, որից մեր տանջվող եղբայրն և քոյրն ներկայումս իրանից ոչ մի օգուտ չունին:

Յարգելի ընկերներ, այժմ մեր ոյժ ու միտքն գործադրենք միայն մեր հայրենիքի կարիքներին, որոնք այդքան շատ են, և ապա թող տալ մեզ ծառայել ուրիշ լաւ մտքերի: Ընկեր հայդուկներ, յիշենք ու չը մոռանանք մեր անմահ Սերոբների Հրայրների և Թումանների նպատակներ, որոնք իրանց արիւնով նուիրագործած են ի պատիւ լքված հայրենիքի և պարտք ենք համարում առանց որևէ մտքերի հետևել նրանց օրինակին: Մենք լոկ զուտ հոգով, մի հատ փամփուշտով աւելի ուսումնասիրել ենք բարձր պահել անմահ շիրիմների յիշատակներ: Ուրեմն ձեռք ձեռքի տանք և գործենք միասին:

Ախլաթցի զինւոր՝ Գրիգոր

Բաթում, 1906 թ. օգոստ. 30.

## ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Կարդալով «Զանգ» թերթի 15-րդ համարում Սեպուհ, Մխիթար, դաշնակցական Խեչօ և Հաջի ստորագրութեամբ բաց նամակը, մենք, դաշնակցական խմբերի հարիւրապետներս, այդ առիթով յայտնում ենք մեր խորին զայրոյթը: Թող լաւ իմանան այդ պարոնները, որ նրանք այդպիսի միջոցներով անկարող են արատաւորել խմբապետ Միհրանի արժանիքը: «Մշակում» տպված խմբապետի նամակները Դաշնակցութեան զինւորների և ժողովրդի անհանգստութիւնների արտայայտութիւններ են: Դուք լաւ հասկացէք, որ մենք միանգամայն հերքում ենք կովկասեան նախագիծը և բոլոր հոգով խմբապետի հետ կապված՝ պաշտպանում ենք Դաշնակցութեան նախկին ծրագիրը. և հետևաբար խմբապետի և իր նմանների հասցէին ուղղված այդ յիշոցները մենք աւելի շուտ կը վերագրենք մեր այն անարժան շեֆերին, որոնք այսպիսի անօրինակ գրութիւն են ստեղծել:

Այժմ պարոններ, կովկասեան նախագծի մենք արհամարհելով արհամարհում ենք որպէսզի մենք դաւադիրներ չը լինենք (ըստ ձեր հայեցողութեան), դուք մեզ և մեր ամբողջ ժողովրդին, համոզեցէք լրագրի էջերից՝ թէ մեր այդ նախագծով ինչպէս էք պաշտպանում ինքնապաշտպանութեան կռիւը, նահանջելով տաճկահայ դատը, որ մեզ համար սուրբ է և կը մնայ սուրբ մինչև յաւիտեան:

Թիֆլիսի հարիւրապետ խմբապետներ՝
Մուշեղ, Յակոբ Գասպարեան,
Ռեսուլ, Սարօ, Սմբակ, Դըրօ,
Մեքեալեչ, Խեչօ:

—

Եկատերինօդար, օգոստոսի 13-ին

Խմբապետ պ. Միհրանը, կարդալով «Մշակի» 159 համարում զետեղած իմ նամակը, չէ կարողացել «չը սարսափել», իսկ ես կարդալով յարգելի խմբապետի «Մշակի» 172 համարում զետեղած նամակը չը կարողացայ չը զարմանալ, որ այդքան թիւրիմացութեան առիթ է տուել նամակս, մինչդեռ ես սպասում էի, որ նամակս հայ հայդուկի վրա բոլորովին հակառակ ազդեցութիւն պիտի գործէ:

Ես մտնում եմ յարգելի խմբապետի հոգեկան զբաղմունքի մէջ. նրան զայրացրել և սարսափեցրել է. ոչ միայն իր համար, այլ ամբողջ չարաբաստ հայ ազգի համար երկար տարիների ընթացքում «սարսափի» առարկայ դարձած «դաւաճան» խօսքը: Զգում եմ, որ այդ խօսքը շատ վատ է հնչում հայ մարդու, մանաւանդ հայդուկի ականջում: Ես զգում եմ, որ հայ հայդուկը լսելով «դաւաճան» խօսքը, խռովւում, վրդովվում է, տակն ու վրա է լինում նրա հոգեկան աշխարհը մինչև այն աստիճան, որ բարին ու չարը, սևն ու սպիտակը դժուար է ջոկում իրարից: Ես առաջարկում եմ յարգելի խմբապետին նորից կարդալ նամակս և համոզվել «դաւաճան կոչման միայն արժանի կը լինեն» խօսքերիս, փոխել և կարդալ՝ «շեղված կը լինեն իրանց նպատակից», որով իմ նամակիս միտքը նոյնը կը մնայ և որ Միհրանը կը հասկանայ, որ իմ գործ դրած «դաւաճան» խօսքը այն «դաւաճանը» չէ, որը կարող է հայ հայդուկին արդար բարկութեամբ բորբոքել և ձեռը դէպի դաշոյնը տանել:

Ես շատ ուրախ եմ, որ իմ «լուսանցքները» առիթ են տուել հայ հայդուկին մի առ ժամանակ սուրը պատեանում դնել և գրիչ առնել չարն ու բարին իրարից ջոկելու: Ես սիրում եմ հայդուկին. նա թէև հարցը վճռում է րոպէական տպաւորութեան տակ, նա թէև քաղաքագէտ չէ, նա համբերութիւն չունի հարցը ծեծել, չափել, կշռադատել, որի համար և գուցէ շատ անգամ սխալանքի մէջ է ընկնում, բայց նա անկեղծ է. այդ անկեղծութիւնը, սրտի մաքրութիւնն է, որ սիրում եմ: Յարգելի խմբապետ, իբրև դրանցից մէկը, շատ սխալ է հասկացել ինձ. եթէ նրա նամակի մէջ ինձ համար մի վիրաւորական կէտ կայ, դա սխալ ըմբռնումն է իմ նամակի, որի համար առաջարկում եմ նորից կարդալ նամակս. հաւատացած եմ, որ եթէ իմ երևակայած անկեղծ սիրտ ունեցողներից է, շատ պիտի փոշմանէ իր անտեղի վիրաւորանքների համար:

Յարգելի խմբապետ, դուք գրում էք. «Մեր շուրջը՝ չարքեր են վխտում. ինչ են այդ փափուկները, եթէ ոչ «այլասերւած գաղափարների կտոր ու բրթոշ փշրանքներ, և շնորհիւ այսպիսի պայմանների մեր անունը սասանւեց դառնացել է»: Այո, մըտանում եմ ձեր գրութեան մէջ, բայց դուք ևս եղէք բարի և մտէք մի քանի րոպէ մեր գրութեան մէջ, որ «այլասերւած գաղափարները» մեր անունն էլ դառնացրել են: Ես հայդուկ չեմ, մարդու վէրքից արիւն հոսելը տեսնելիս սիրտս նուաղում է, այդ է պատճառը, որ խոնարհում եմ նրանց առաջ, որոնք արհամարհում են կեանքը և երկրային բախտաւորութիւնը մի բարձրագոյն գաղափարի համար:

Բայց ի սէր Քրիստոսի փարատեցէք և մեր տարակուսանքները. մենք էլ տանջվում ենք, տանջվում ենք գուցէ չը հասկացողութիւնից, բայց անկեղծ են և մեր տանջանքները և զայրոյթը. բացատրեցէք դուք և ձեր մարտակից ընկերները, ինչպէ՞ս հասկանանք Հ. Յ. Դաշնակցութեան 1906 թ. մարտի 28-ից մինչև ապրիլի 7-ը տեղի ունեցած րայօնական ժողովի որոշումները, որոնց «ագրարային հարցը» վերնագրի տակ կարդում ենք. «Րայօնական ժողովը ելակէտ ընդունելով սօցիալիզմի սկզբունքը... համարելով վանական կալուածները իբրև համայն ազգային համայնացրված սեփականութիւն... որոշում է անհրաժեշտ հողաբաժիններով հիմնապէս ապահովել աշխատող համայնքների, առանց ազգերի խտրութեան, վիճակը»: Ձեզ եմ դիմում, յարգելի խմբապետ, փարատեցէք իմ և ինձ նման շատերի տարակուսանքները. գուցէ մենք կղերական-կաստայական ձգտումներով կուրացած, չենք հասկանում, բայց անկեղծ և առանց որ և է անձնական հաշիւներ աչքի առաջ ունենալու վրդովված ենք: «Մեր անունն էլ դառնացել է, կարծես հարամ լինի նա. ապրել այսպիսի պայմաններում, թէ յեղափոխութեան մէջ յեղափոխական նոր պայքար մղել, վճռեցէք այս հարցը»: Վճռեցէք, դուք, Շուշու և Զանգեզուրի բարձունքների և ձորերի մէջ, դաւաճան և հարևանութեան սրբութիւնը ոտնակոխ արած թուրքի դէմ կռւող կտրիճներ. հասել է արդեօք այն ժամանակը, որ մենք ընդունելով «ելակէտ սօցիալիզմի սկզբունքը» մեր վանքերի կալուածներից բաժին հանենք մեր արիւնը ծծող, մեր օջախը և վաթանը քարուքանդ անող, մեր կոյսերին և պատանիներին բռնաբարող, մեր կրօնական սրբութիւնները պղծող թուրքին և թաթարեանին: Ինչ է սա. դիւզիթրայի՞ ենք առաջարկում թուրքին: Ի սէր Աստուծոյ, վճռեցէք. մենք վաղուց սպասում էինք ձեր խօսքին. ուրախ ենք, որ ձայն էք բարձրացնում: Մտէք և մեր, ոչ-հայդուկներիս հոգու մէջ. մեր սիրտն էլ լցված է: Մի տեղ կարդում ենք, որ սուլթան Համիդը Մուշ հողերը առնում բաժանում է «խաչ ու կրակ, անասուն-անտեր» չերքեզներին և քրդերին, իսկ միւս տեղ կարդում ենք, որ 1906 թ. զատկի կարմիր օրերը թուրքի ձեռքով սուգ փոխուրված օրերում, երբ դեռ հայ ժողովուրդը հոգեհանգիստ էր առաջ բերում Զանգեզուրի, իմ քար ու քանդ եղած հայրենիքի, ներսո-հանգստեան Ստեփանեանի համար, երբ դաւաճան Ալթունի և Վաղարշի գիւղերի թուրքերի ձեռքով նրա թափված արիւնը դեռ չէր չորացել, Հ. Յ. Դաշնակցութիւնը որոշումներ էր կայացնում հայոց վանքերի կալուածներով ապահովել թուրք ժողովրդին:

Ես լռում եմ. դուք քննեցէք և վճռեցէք, սա իսկական թէ «այլասերւած գաղափարների» տէր դաշնակցականների գործ է, քննեցէք, և եթէ գտնէք, որ իմ արդար զայրոյթը ընդդէմ է «մեծ իդէալին», այն ժամանակ թողէք, որ ես էլ իմ «սիրած հողի զոհը լինեմ»: Վճռեցէք ոչ հայդուկային տաք արիւնով, այլ դուրս գալով ժամանակի և տաք բանաձևութեան սահմաններից, կարդացէք մեր վիճակում եղած և եղող ազգերի հայդուկների պատմութիւնը և ծրագիրները. արդեօք նրանք էլ են ընդունել և ընդունում իրանց գործերի «ելակէտ սօցիալիզմի սկզբունքը», արդեօք յունաց և բուլղարների հայդուկները ևս իրանց րայօնական ժողովներում որոշել են վանքերի կալուածները համայնացնել, առանց ազգերի խտրութեան բաժանել. արդեօք նոցա հայդուկները ևս սօցիալիզմի դալլաթութիւնը իրանց ազգի գլխին են ուզեցել փորձել, թէ մենք ենք, որ աշխարհիս վրա ուզում ենք բացառութիւն կազմել. մի թէ հայ գիւղացին այդ է սպասում հայ հայդուկից, Հ. Յ. Դ.-ից: Բացատրեցէք և վճռեցէք:

Արսէն քա՛հ. Վարդանեան

## «ՎԵՋՈՒԿԻ ԲՈՐԲՈՔՈՒՄՆԵՐԻՑ»

(Նամակ խմբագրութեան)

Այո, ներկայիս այդ է պատկերացնում մեր դժբախտ իրականութիւնը. նա տխուր է, որքան ասէք, գուցէ և շատ ծանր՝ իր ողբերգական հետևանքներով. մէկ կողմը իրաւազուրկ ժողովուրդը ու նրա բազդի համար կռիւ մղող զինւորն է կանգնած, իսկ միւս կողմը բիւրոկրատ վարչութիւնը, որը և բռնաբարել է մեր գաղափարական սրբութիւնը. բիւրոկրատիան մեն-մենակ իր պրովօկացիան է մղում. փողով թէ պատիւներ խոստանալով աշխատում է կաշառել մեր անձնուէր զինւորներին, որպէս զի իր խախուտ գոյութիւնը անխախտ պահի: Իրերի այս ծանր դրութիւնը միանգամայն յեղաշրջել է ամբողջ դաշնակցական աշխարհը. մեզնից շատ շատերը իրանց գլուխները կորցրած դեռ անկարող են իրանց դերը որոշել. իսկ բիւրոկրատական վարչութիւնը գտնվելով ամենախեղճ տագնապի մէջ կուրծք է ծեծում այս ու այն անհատի հասցէին և պահանջում, որ «Արդարութիւնը ինքը խնդրէ ներողութիւն»: Շատերը պախարակում են, որ մենք յեղափոխութիւնը մասնաւորելով կռիւ ենք յայտարարում ընդհանուրի անունից, որը իբր թէ սկզբունքի տեսակէտից անօրինակութիւն է, պէտք է ընդհանուր ժողով հրաւիրէինք և այնտեղ միայն պէտք է յայտնէինք մեր բողոքը և այլն և այլն. անշուշտ պահպանողականներն են այդպէս մտածող ու խօսողները, և որոնք բառ երևոյթին յարմարվելով բիւրոկրատ ասպետների քմահաճոյքներին, անարժանաբար տեղ են գրաւում հրապարակը իշխելու. մի՞թէ հասկանալի չէ, որ բիւրոկրատ վարչութեան բարեհաճութեամբ թոյլատրված ժողովները նոյն բիւրոկրատական հովերով են առաջնորդվելու. օրինականութեան անունից ճառող մեր խղճուկները իրանցից շատ ծանր հարցեր են շօշափում, պարտքի և իրաւունքի շուրջ խնդիրներ, և այդպիսով փորձում են մեզ համոզել՝ որ Դաշնակցութիւնը այն է եղել, ինչ որ էր իր 15 տարվայ անցեալում. «Երանի հաւատացելոց». այնինչ մեր ամենապարզ զինւորին իսկ պարզ է, թէ այժմ ինչ է Դաշնակցութիւնը: Այո, դուք, փոփոխամիտ իդէալիստներդ, յիմար էք անուանում ժողովրդին, բայց այդ նոյն ժողովուրդն է, որ անշեղ հետևելով իր հիմնական նպատակին, ամեն անգամ առիթը ներկայանալիս տալիս է ձեր երեսով և պահանջում, որ Դաշնակցութիւնը ղեկավարվի իր նախկին ուղղութեամբ, մինչդեռ դուք իսկոյն կեղծելով ձեր նոր ուղղութիւնը, անմիջապէս թաքնվում էք այն դրօշակի տակ, որը միմիայն ժողովրդի համար է սուրբ և անարատ. իսկ ձեզ, ապիկար վարչականներ, մենք կասենք, որ միմիայն և միայն շահագործում էք Դաշնակցութիւնը, նրա հիմնական նպատակը ձեզ համար մի մնացած տառ է. ձեզ թէև շատ ու շատ ցանկալի է, որ նա կորցնէ իր մաքրութիւնը, սակայն դուք անմիջապէս չէք կարող նրան մահվան դատապարտել, որովհետև ձեզ պարզ է և այն, որ նախ քան ձեր վճիռը բարոյական մահը աւելի շատ ձեզ է հասնելու: Այժմ ժամանակն է, ով դիմակաւորներ, որ դուք խոստովանէք ձեր յանցաւոր գործունէութիւնը, որ այսօր ժողովուրդն ու նրա փրկութեան նուիրված զինւորականութիւնը դուք իբրար էք անզգացրել նրա համար, որ այն դժբախտ օրը, երբ թեժում էին Կովկասեան չարաբաստիկ նախագծի այն «որովհետևները» դուք երբէք նախատեսել չը կարողացաք այն դժբախտ ապագան, որ այժմ Դաշնակցութիւնը յուզմունքների ու փոթորիկների մի ամբողջ աշխարհ է ներկայացնում: Այժմ հարց ենք տալիս. այս ծանր րոպէի առաջ ո՞վ է պատասխանատուն, արդեօք նրանք, որոնց երկար տարիների դաւանանքը դուք բռնաբարել կամեցաք, թէ արդեօք նրանք, որոնք բօլշևական դաւաճանութեամբ փոխեցին իրանց ուղղութիւնը: Արդեօք չէ՞ք կարծում ձեր զզուելի արարքներից, երբ ամեն անգամ այդ առիթով որևէ անկիւնից բողոքի մի արդար զայրոյթ է բարձրանում Դուք աշխատել էք բռնութիւններով և ձեր պրովօկացիաներով հանգցնել նրան և եթէ այդ էլ չէ աջողվել ձեզ, անմիջապէս դիմում էք Սեպուհների և Մուրադների միջոցով հանգստացնել յուզմունքը. քանի մի երրորդ անգամը. ասացէք տեսնենք, չը վերջացա՞ւ ձեր այդ մանեօվրները. Սեպուհն ու Մուրադը՝ այս ժողովրդին սիրելի են և կը մնան սիրելի. բայց արդար բողոքը մի մոռանաք դուք, պարոններ, որ երբէք չի լռի. այսօր կը տեսնէ Սեպուհին և Մուրադին, կը դադարի բայց էգուց դարձեալ բըռնկվելու է նա. հետևանքը՝ օ, սարսափելի է ձեր ձգուն քաղաքականութիւնը. ամեն անգամ երբ ձեզ յիշեցնում են փոթորկող դըրութիւնը, դուք իսկոյն առարկում էք, որ ոչինչ չը կայ, մի քանի անհատների սադրանքն է և այլն. այդ և նման առարկութիւնները մեզ յայտնի են. թէև չէք սիրում դուք Մոսոլիկինին, բայց յամենայն դէպս նրանից սովորած բաներ էք խօսում. մինչդեռ այդ անտեղի առարկութիւններով դուք աւելի կը սաստկացնէք յուզմունքը, քան պէտք է, եթէ ձեզ ցանկալի չէ խելքի գալ: Դուք ստիպված կը զգաք ընդհանուր կոչ հրատարակել ժողովրդին և զինւորներին: Դրութիւնը լուրջ է. զգուշացէք այն ծայրայեղ զգուշութեամբ, որով մարդիկ հարկ են զգում շօշափելու որևէ վտանգաւոր սիստեմով պատրաստված ռումբը. նոյնպէս և աւելի սարսափով, մենք կարծում էինք, դուք կը վերաբերվէիք մեր ներկայ պայմաններին. և դժբախտաբար մեր բիւրոկրատները այդ զգուշութիւնը, այդ վերաբերմունքը երբէք չունեն մեր յեղափոխական տակտիկայի և նրա գործունէութեան հիմնական կէտերի վերաբերմամբ: Մարդիկ, որ կեանքի գնով կապված են յեղափոխութեան հետ, պէտք է զգոյշ լինեն՝ միանգամայն զգոյշ՝ յեղափոխական ընդհանուր սկզբունքի և ընդհանուր ուղղութեան վերաբերմամբ: Այդ դեռ բաւական չէ, նոյն իսկ յեղափոխական անհատի համոզմունքների և իրաւունքի վերաբերմամբ. այլապէս նա, յեղափոխութիւնը, իր մէջ ընդունելով բռնկվող նիւթեր, կը ժայթքի և իր արձակած հրեղէն ուժգին լաւաների տակ կը թաղէ իր անզգոյշ բիւրոկրատներին: Ստորերկրեայ ուժեղ ցնցումները վերջին ժամանակներս արդէն սաստիկ նըկատելի են և դրա հետ միաժամանակ բիւրոկրատիայի սաստ պրովօկացիան: Ուղղիղ երկարող և կարճող յատուկ փաստաբանութեամբ, պարտքի և իրաւունքի խնդիրներ են յարուցանում, որպէսզի իրանց աջողվի մի կերպ բորբոքված կրքերը հանգստացնել և մի քանիսները, որոնք իրանց խղճուկ կարծիքով իբր թէ հրդեհի բռնկիչ նիւթն են կազմում, նրանց էլ կարելի է ոչնչացնել. յիմարութիւն յիմարութեանց. ինչ զզվելի տակտիկա: Մարդիկ գալիս են ոչ թէ օրինական ճանապարհով մեզ համոզելու, այլ խաբելու: Մենք պարտաւոր ենք պահանջներից հրաժարվելու: Այո, եթէ չը լինէր յեղափոխական այն պարզ գիտակցութիւնը, և եթէ չը լինէր սկզբունքի այն անարատ համոզմունքը, որ շաղկապվել է մեր նահատակ ընկերների յիշատակներով և նմանապէս եթէ մենք չը կատարէինք տասնեակ տարիներով մեր անխոնջ ծառայութիւնը, գուցէ մենք չը զիջէինք և տեղի տայինք ձեր առաջարկած միջոցներին. մինչդեռ այժմ անկարող ենք մեր կողմից ոսկէ մի զիջում անել. ճանապարհ գըտէք մեզ գոհացում տալու ով գաղափարական խաղալիքներ. համերաշխութեան միակ միջոցը՝ ձեր բարեխղճութիւնն է ձեր շօշափած նուրբ հարցերի վերաբերմամբ: Ի նկատի ունեցէք, որ գաղափարը երբէք վաճառքի չէ կարելի հանել, եթէ այդ հնարաւոր է, դուք պէտք է զիջէք. այո, միմիայն դուք. որովհետև ձեզ հեշտ է մի բոլորովին նոր նախագիծ ստեղծել և հետևել նրան. բայց մեզ համար իդէալը մի է և անխախտ, որ նա իր որոշ նպատակը ունի՝ մեզ առաջնորդելու իր յենակէտը և կամ գերեզման. այս հանգամանքի վրա լուրջ ուշադրութիւն եմ հրաւիրում բոլոր զինւորներին և բոլոր ժողովրդին. ամեն տեղ թող կազմվեն ժամանակաւոր կոմիտէ և ժամանակաւոր զինուորական վարչութիւն, և թող կազմվեն քայքայված բոլոր խմբերը, ինչպէս այդ կազմվել է և դեռ կազմվում է Թիֆլիսում, ես հաւատացած եմ, որ ամեն տեղ ստուար մեծամասնութիւն կազմողը մենք իսկական դաշնակցականներս ենք և ոչ թէ Դաշնակցութեան դրօշակի տակ հովանաւորվող անգոյն սօցիալիստները. մենք տասնապատիկ աւելի ճնշող մեծամասնութիւն ենք, միայն թէ ջանք, միայն թէ հաւաք քայքայված խմբերը կազմելու: Ժամանակը հասունացել է, առա զանգերը հնչէ. փոթորկոտ, տագնապալի ժամերը մօտենում են և Դաշնակցութիւնը դարձեալ կը տիրապետէ իր նախկին փայլով, որին և անշուշտ տեղի կը տայ մեր բիւրոկրատիայի անարժան տիրապետութիւնը: Ընկերներ, զինւորի պարտքը տարէք անարատ, յանուն հայրենիքի և մեր նահատակ ընկերների, ըմբռնէք րոպէի լրջութիւնը. միք ծախի ձեր վեհ գաղափարը, որից բիւրոկրատները շատ լաւ գիտեն օգտվել. ձեզ կարող են գործիք դարձնել որ առնեն կը հոսէ արդար արիւնը յանուն ինչ՞ի մեր բիւրոկրատ շեֆերի պաշտօնավարութեան, երբէք. մենք կռուի դաշտում ընկերներ ենք եղել՝ կողք կողքի՝ դարձեալ նոյն ընկերութեամբ կը գնանք կռուի դաշտ. այնտեղ, ուր ընկել են մեր նահատակ ընկերները. այո, մեր միակ նպատակը այդ է, և յանուն այդ նպատակի պէտք է որ տապալվի մեր սօցիալիստ բիւրոկրատիան: Զինւորներ, գիտակցէք ձեր դերը, ձեզանից իւրաքանչիւրը թող արի լինի և չը վախենայ այն պրովօկատօր վարձկան սպառնալիքներից, խտացրէք ձեր շարքերը և որքան կարելի է հարուածը ուժեղ հասցրէք, թող միանգամից կործանվի այն խարխուլ շէնքը, ուր բիւրոկրատիան է պատսպարված. նրա վերջին տարիների գործունէութիւնը ժողովրդի սրտի մէջ անհուն վէրեր է թաղել, և նմանապէս զինւորների սրտում, զինւորի, որ կեանքի գնով պարտականութիւն է կատարել, զինւորի, որ իր արիւնով միշտ բարձր է պահել Դաշնակցութեան դրօշակը. և սակայն զինւորն էլ ամենից անարգվածն ու ամենից արհամարհվածն է: Այն բիւրոկրատ մարմինները, որոնք զինւորի անունից յոխորտում են, բայց ցաւալի է, որ երբ զինւորը որևէ խորհրդի կամ իր որևէ կարիքի համար դիմում է վարչական ասպետներին, որոնք ոչ միայն զզվանքով են ընդունում, այլ և բացարձակ արհամարհանքով: Ինքնապաշտպանութեան կռիւներից կամ երկրից եկած ընկերները թող յիշեն, թէ ինչ ընդունելութիւն են գտել կամ ապրուստի ինչ միջոց. շատ անգամ նոյն իսկ զինւորների ձեռքը տուել են կեղծ յանձնարարականներ, որոնց մի քանի նմուշները ունենք և մտադիր ենք լուսանկարել և կախել նկարչական ցուցակների մէջ «ի պատիւ բիւրոկրատիայի». զինւորի հասցէին որպիսի նախատինք, երբ նա անցնում է մէկ շրջանից միւսը, կարծելով թէ մի քանի օրուան պարէնը ունի արդէն այդ յանձնարարական թղթի մէջ. որպիսի յուսախաբութիւն, երբ յանկարծ օրեկան 30 կօպէկի ցինք ունեցող մի քանի օրվայ այդ խղճուկ պարէնի փոխարէն լսում է անարգական խօսքեր. բացառութիւն են կազմում քեալլագեօզ զինւորները. այո, միակ միջոցը կոմիզաչիների հաճոյքից դուրս գալու համար միմիայն քեալլագեօզ պէտք է լինել. զինւորների մեծամասնութիւնը մինչև այժմս էլ խղճուկ ու թշուառ, այս ու այն ընկերների հաշւով կառավարվելով, քարշ է գալիս, ոչ իր ապագան է որոշ և ոչ էլ իր իղձերը. լոկ այն յոյսը, թէ հալբաթ նորից գործի կը գնամ, իմ սիրած գործին —«կռուի», իմ կուրծքը դէմ կը տամ թշնամուն հայ ժողովրդի պատիւն ու գոյքը պաշտպանելու. զինւորի այդ սպասողական դրութիւնը շատ քաջ գիտեն մեր ասպետները, բայց յետին մտքերով բարեխղճութիւն չեն անում զինւորի երևակայութիւնից միանգամայն ջնջելու այդ միտքը. ում յայտնի չէ մեր ասպետների նպատակը, որ Տաճկաստան խումբ գնալու հաշիւը միանգամայն փակված է, և այս թեր ու դէմ երևակայութիւններով զինւորը կորցնում է իր ապագան. զինւորը շատ լաւ պիտի հասկանայ և այն, որ ինքը սրանից յետոյ մի աւելորդ բեռ է իշխող բիւրոկրատիայի համար, և որ նա այժմ այն արժանիքը չէ վայելում իր բիւրոկրատ ասպետների սրտում, որքան այդ վայելում են նոյն ասպետների քիասէի եղբայրները: Մեր շեֆերի այս տարօրինակ բարեխղճութիւնը յանձնում եմ զինւորների իրանց դատողութեանը. թող մի լաւ քննեն քրքրեն, թէ ինչ հրէշաւոր պատկեր են տեսնելու յանձին այդ ազգի իշխանաւորների. այդ դէմքերը կարևոր է համանունանց պրօֆէսիօնալ միութիւններ կազմողներին. ճնշվողները թող լաւ ճանաչեն իրանց շահերի պաշտպան այդ դիմակաւոր բարեկամներին:

Խմբապետ Միհրան

## ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Թիֆլիսի ժամանակաւոր գեներալ-նահանգապետը վաղը հրաման կարձակէ, որ հասցէների սեղանը (адресный столъ) վերականգնվի, որով իւրաքանչիւր տանտէր պարտաւոր ունենալ տնացուցակ՝ գնացող-եկողներին ցուցակագրելու համար:

—

«Մածակ» երգիծաբանական շաբաթաթերթի № 2 զրաւված է, տպարանը կնքված իսկ խմբագիր Դուեթեանին բանտարկել են:

—

Ժողովրդական ընթերցանութիւններ կազմակերպող յանձնաժողովը սեպտեմբերի 10-ից Հաւլաբարում, Մուրաշկոյի թատրոնում կը սկսէ կազմակերպել ժողովրդական ներկայացումներ: Նոյն յանձնաժողովը մտադիր է Վերայում և Դիդուբէյում կազմակերպել ընթերցանութիւններ, որի նպատակով էլ արդէն փնտրում են յիշեալ քաղաքամասերում յարմար բնակարաններ:

—

Օգոստոսի լոյս 29-ի գիշերը Բէսուտովսկի և Նիկոլայեվսկի փողոցների անկիւնում հրդեհ է առաջացել, ինչպէս ենթադրում են, կրակ տալուց: Այրվել է Արտէմ Ղազարեանի տունը ամբողջ կայքով: Տանից մնացել են միայն զատարկ պատերը:

—

Թիֆլիսի նահանգական քաղաքացիական բաժնի առեանը 1906 թւի բիւջէի մէջ է մտցրել 100,000 րուբլի ծախսը քաղաքային ոստիկանութիւնը պահպանելու համար:

—

Առաջիկայ ձմեռը Վիեննայում կը ներկայացվի «Красный адмиралъ» (լէյտենանտ Շմիդտ): Այդ պիեսան ռուսերէնից հրատարակված է Շվեյցարիայում:

(«Об·н»)

—

Ստացանք Էդմոնդօ Դէ Ամիչիսի «Սիրտ» գրքից ինն պատմութիւն», տասը պատկերներով, գերմաներէնից թարգմանութիւն Ս. Բաժալեանի, 144 երես, գինն է 40 կոպէկ:

—

Սեպտեմբերի 6-ին դատաստանական պալատում նշանակված է «Կեանք» լրագրի խմբագիր Բ. Իշխանեանի մեղադրական գործի քննութիւնը համաձայն 129 յօդուածի:

—

Թիֆլիսի քաղաքային խորհրդի նիստը սկսվելու է սեպտեմբերի 4-ից:

—

Օգոս. 30-ին ,գիշերվայ ժամը 1-ին Թիֆլիսի քաղաքացիներ Ալէքսանդր Բայրուով և պաշտօնեայ Ֆէօդորովը անցնելիս են եղել Արխիպովսկի միջանցքով, որ պատահել են մի քանի զինւորների, որոնք հետամուտ լինելով—երբ նրանք մտել են իրանց բնակարանը և ճատել են ընթրելու—սկսել են քարեր նետել: Ֆէօդորովը պատասխանել է բերդանի կրակով մի քանի անգամ արձակելով, որից և զինւորները թողել և անյայտացել են:

—

Օգոստոսի 28-ի գիշերը նախկին սէիդ Միր-Բագիր-աղա Միր-Հէյդար-Զադէի բնակարանում (VI քաղաքամաս) ոստիկանութիւնը խուզարկութիւն է կատարել: Միր-Բագիր-աղան բանտարկված է Մետեխի բանտում:

—

Լուր է պտտում, որ այս տարի զինւորակոչութեան ժամանակ ամբողջ Ռուսաստանում արտակարգ դրութիւն է յայտարարվելու, որպէսզի հնարաւորութիւն տրվի զինւորական դաշտային դատարաններին ազատ գործելու, այն դէպքում, եթէ որ գիւղացիները հրաժարվելու լինեն նորակոչ զինւորներ տալ: («Нов. Путь»)

—

Ֆինլանդական գեներալ-նահանգապետին, զինւորական մինիստրին և ուրիշ մի քանի բարձրաստիճան պաշտօնեաների առաջարկված է կարծիք յայտնել. ցանկալի՞ է, արդեօք, առաջուայ վերացնել զինւորական դրութիւնը Սվէաբորգում թէ ոչ:

«Нов. Путь» լրագիրը տեղեկութիւն է ստացել Մագիլեվից, որ տեռօրիստ-միապետականների Մօգիլեվի կօմիտեաի խորհուրդը ուղարկել է հասարակական գործիչ երդուեալ հաւատարմատար Հեսսենին և մասնագէտ անտառագէտ Լեվիտանին մի նամակ, որով հաղորդում է, որ նրանք մահվան են դատապարտված։ Նամակի տակ, կնիքի փոխարէն, նկարված է գանգ և խաչաձև դրված երկու ոսկորներ, իսկ կողքերում դրված են երկու վառվող մոմեր։

—

Ոստիկանապետի դիւանատունը տեղափոխվում է նոր բնակարանը—Լերմոնտօվսկի փողոց տուն Ծերեթելիի, նախկին Մերաբեանի։

—

Մօտ օրերս Պաւլօվսկից, Մեծ Իշխան Կօստանդին Կօստանդինօվիչի պալատական եկեղեցուց, գողացված են թանկագին ոսկէ սկիհ, զարդարված գոհարներով և չորս թանկագին ոսկէ պատկերներ։

—

«Р. Сл.» լրագրի Վարշաւայի թղթակիցը հաղորդելով մասսայական խուզարկութիւնների և ձերբակալութիւնների մանրամասնութիւնը, ասում է, որ հարիւրաւոր ձերբակալվածների և բռնութիւնների մատնվածների թւում ի միջի այլոց կային և երկու անգլիացի գրականագէտներ՝ «Standardt» թերթի թղթակից Լօնդօն և Գրեգամ։ Նրանք ռուսերէն ոչ մի խօսք չեն իմանում և չէին կարողանում պատասխանել առաջարկված հարցերին. այդ պատճառով նրանց վտանգաւոր յեղափոխականներ համարեցին և կալանաւորեցին։

—

Մայրաքաղաքում գտնվող շատ ուսանողներ, ինչպէս հաղորդում է «Пет. Газ.», ստացել են հետևեալ ծանուցումը, որը լրագիրը բերում է բառացի. «Մենք, աջակողմեանների կուսակցութեան միակ առողջ հայեցակէտին պատկանող ուսանողներս, յայտնում ենք մեր ընկերներին, որ մենք և ոչ մի դէպքում այս տարի գործադուլ չենք անելու։ Եւ եթէ ուսանողական ժողովներում գործադուլ անելու հարցը վերստին վճռվի, այն դէպքում մենք համաձայն մեր դրական վճռի, ամեն միջոցներով կը դիմադրենք նրան և չենք թողնի ինստիտուտի պարապմունքները»։

—

Ռուսաց Սինօդում հարց է յարուցված օգտվելու վանքապատկան դրամագլուխներից։ Մտադրվում է այդ դրամագլուխներից մի մասը յատկացնել ժողովրդական կրթութեան գործի համար։ («Нов. Путь»)

—

Ռուսաց Սինօդում սկզբունքով համաձայնութիւն է կայացել աշխարհիկ դատարանին յանձնել այն ամուսնալուծութեան գործերը, որոնք պարունակում են իրանց մէջ շնութիւն և ամուսնութեան մէջ անընդունակութիւն։

—

Անցեալ տարի միջնակարգ դպրոցների ուսուցչական միութեանը մասնակցելու համար զանազան դպրոցներից արձակված ուսուցիչներից շատերը ներկայումս վերստին հրաւիրվում են իրանց նախկին պաշտօնին։ Դրա պատճառը այն է, որ մեծ քանակութեամբ ազատ տեղեր կան մասնագէտ-ուսուցիչներ չը լինելու համար։ («Нов. Путь»)

—

Անդրկասպեան երկրի զինւորական շրջանի զօրքերին տուել են 140,000 րուբլի ոստիկանական ծառայութիւն վարելու համար։ («Нов. Путь»)

—

ՄԵՐՎԻՑ, մեզ գրում են. Օգոստոսի 20-ին, կիրակի օր կանանց հայոց բարեգործական ընկերութեան վարչութիւնը ժողովարանի այգում կազմեց բաւական շքեղ վիճակախաղ իշխանութեան թոյլտւութեամբ։ Այգին զարդարված էր կիօսկերով, վրանները զարդարված էին գեղեցիկ ծաղիկներով, դրօշակներով և այլն։ Ամեն կողմից հնչում էր երաժշտութիւնը, կէսօրվա ժամի 12-ից մինչև երեկոյեան ժամի 9-ը։ Մուտք եղաւ բաւարար, շնորհիւ տեղական թուրքմանների, այն է 1212 ր., որից կը մնայ զուտ արդիւնք մօտ 1000 ր.։ Աչքի էր ընկնում հայ հասարակութեան մեծամասնութեան բացակայութիւնը, մանաւանդ հարուստների, որոնք իրանց այդ անտարբերութեամբ միանգամայն զարմացրին այլազգերին։»

## ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Օգոստոսի 29-ին Կուկիյսկի միջանցքով անցնող Թիֆլիսի նահանգական դատարանի ատենապետ Անտօն Կօխանօվսկու վրա յարձակվել են 5 չարագործներ և, մահվան սպառնալիքով, խլել են 7 րուբլի փող և մի հատ մետաղէ ժամացոյց։

—

Օգոստոսի 28-ին, երեկոյեան ժամը ութ և կէսին. Արմեանսկի փողոցի վրա մի անյայտ մարդ 3 անգամ ատրճանակ արձակեց, ոչ ոքի վնաս չը պատճառելով։

—

Օգոստոսի 28-ին, առաւօտեան ժամը 11-ին կապիտան Արչեւլօվի սպասաւոր զինւոր—մի ոմն Կաչաևը Օլգինսկի փողոցում ընկել է էլէքտրաքարշի վագոնից իջնելիս և գլխից ջարդվածք է ստացել և անզգայացած դրութեան մէջ ուղարկվել է Միքայէլեան հիւանդանոցը։

## «ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

### ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

30 օգոստոսի

ՄՈՍԿՎԱ, 29 օգոստոսի։ Սադօվայա փողոցում Օմօնի մօտ երկու զինված մարդիկ կրակեցին քաղաքապահների վրա, բայց նրանց չը վիրաւորեցին։ Երկուսն էլ բռնված են։ Հետապնդման ժամանակ նրանցից մէկը վիրաւորվեց։ Յայտնվեց, որ նա ստիպմամբ առնող (экспропріаторъ) յեղափոխական կուսակցութեան անդամն է, «Володя» յայտնի մականունով, փոխադարձ վարկի ընկերութեան և ուրիշ կողոպտումների կազմակերպիչն էր։ Նա նոյնպէս մեղադրվում է դեկտեմբեր ամսում խուզարկու ոստիկանութեան պաշտօնեայ Բոյլօշնիկօվի սպանութեան մէջ։

ՕԴԵՍՍԱ, 29 օգոստոսի։ Գեներալ-Նահանգապետը յայտարարեց, որ զինւորական-դաշտային դատարանները Օդեսսայի քաղաքապետութեան սահմաններում իրանց գործունէութիւնը սկսեն օգոստոսի 30-ից։

ՎԱՐՇԱՎԱ, 29 օգոստոսի։ Երեկոյեան Զերնեակօվսկի փողոցով անցնում էր պօրուչիկ Օկուրցօվը։ Նրան մօտեցան մի քանի չարագործներ։ Երբ նրա եռևից գնացող մի կին սկսեց աղաղակել, այն ժամանակ նրանք սպանեցին կնոջը և անյայտացան։

ՍՄՕԼԵՆՍԿ։ Մի քանի օր առաջ 114 գիւղացիք ինքնակամ տիրանալու համար նախկին ազնուականների պարագլխի Բաչինսկիի հողին, գաւառական դատարանով դատապարտվեցին 2 շաբաթից մինչև մէկ ամիս բանտարկութեան։ Այսօր քաղաք եկան 30 գիւղացիք, ջարդեցին Բաչինսկի փաստաբանի բնակարանը և հարևան տների ապակիները։ Ոստիկանութիւնը անկարգութիւններին վերջ տուեց. կալանաւորված են 8 հոգի։

ՄՈՍԿՎԱ, 27 օգոստոսի։ Համալսարանի ուսանողները կազմակերպում են ուսանողական ընկերութիւն գոյութիւն ունեցող օֆիցերական տիպի։

ՍԱՐԱՏՕՎ, 29 օգոստոսի։ (Մասն. Թղթակ.) Անկարգութիւնները սկսվեցին կալանաւորներին կայարանից բանտ տանելու ժամանակ։ Շուկայով անցնելու ժամանակ ամբոխը աշխատեց ազատել կալանաւորվածներին, որոնց ուղեկցում էին ստրաժնիկները և ոստիկանները. ամբոխը սկսեց քարեր նետել. ուղեկցող ստրաժնիկները և քաղաքապահները կրակեցին, ամբոխը ցրվեց, սպանվեց Պօպօվը։ Կալանաւորները տարվեցին նշանակված տեղը. 27-ի ցերեկվայ ժամը մէկին, երեկ առաջուց պատրաստած նախագծի համաձայն, օգտվելով զօրքի Նիկօլաեվսկի արուարձանը գնալով, Կամիշինի դէմ, ապստամբները Սարատօվսկի փողոցում պատնէշ շինեցին և սկսեցին կռվակահարել ոստիկանութեան և զինւորական պետի դիւանատունը։ Ապստամբները զինված էին բերդանկաներով և զէնքի խանութից բռնութեամբ խլված 30 ատրճանակներով։ Միաժամանակ յեղափոխականները գրաւելով շոգեկառքը Սիվլօվօ կայարանի մօտ քանդեցին երկաթագծերը։ Հրացանաձգութիւնը՝ մէկ կողմից քաղաքապահների ու զինւորական պետի զօրախմբի և միւս կողմից յեղափոխականների մէջ տևեց ժամը 1-ից մինչև երեկոյեան ժամը 7-ը։ Յեղափոխականների փորձը անյաջող անցաւ։ Սպանված է մէկ ստրաժնիկ, վիրաւորված են 2 քաղաքապահ։ Յեղափոխականների կողմից սպանված է 6, վիրաւորված 40 հոգի։ Գնդակներից վնասվեց Խպլաւնիկի բնակարանը և պրիստաւի կայքի մի մասը։ Հիմնարկութիւններից վնասված չկան։ Լիւթերականների ընկերութեան ուսումնարանում գտնված է մի ռումբ։ Մինչև այժմ կալանաւորված են 11 հոգի։

31 օգոստոսի

ՄՈՍԿՎԱ, 30 օգոստոսի։ Ալեքսանդր III-ի արձանի շինութեան ժամանակ 800 պուդանոց քարը բարձրացնելիս շղթաները կտրվեցին։ Սպանված են 3, ծանր վիրաւորված են 4 հոգի։

ԼՕՆԴՕՆ, 30 օգոստոսի։ «Դէյլի Մէյլի» ասում է, որ ոչինչ այնքան չէ կարող սաստկացնել երկպառակութիւնը ռուսաց պետութեան և ռուս լիբերալների մէջ, որքան վերջիններիս դիմումը արտասահմանին։ Անգլիացիք ծանօթ չեն ռուսաց պայմաններին և անգլիացիների խորհուրդները, մինչև անգամ եթէ դրանք ծագում են բարի զգացմունքներից, անօգուտ են։ Անգլիական պրէմիերը իր ճառում համաձայնեց անգլիական աւանդական քաղաքականութեան, որ չը պէտք է խառնվել բարեկամ պետութեան ներքին գործերի մէջ։ Ռուսաց լիբերալները աւելի լաւ կը ծառայէին ռուսաց շահերին, եթէ վճռականօրէն դատապարտէին յանցագործութիւնները և շարունակէին իրանց կռիւը չափաւոր սահմանադրական միջոցներով։ Ռուսաց կառավարութիւնը, ինչպէս և ուրիշը, չի թոյլ տայ, որ զիջումները իրանից բղխեն ույժի ճնշմամբ, բայց նա կարող է առանց վտանգի զիջումներ անել, եթէ տեսնէ, որ լիբերալները զգում են իրանց վրա ընկած ամբողջ պատասխանատուութիւնը։ Անգլիացիք զգոյշ պէտք է լինեն յեղափոխական մեթօդների պաշտպանութիւնից, հակառակ դէպքում կը դժուարանայ Ռուսաստանում ռէֆօրմներ մտցնելը և կուսակցութիւնների համար կը ծառայէ մի միջոց, որ ստիպում է կառավարութեան գնալ ռէակցիայի և ռէպրէսիաների ճանապարհով։

ՏԱՄԲՕՎ, 30 օգոստոսի։ Ուսմանսկի գաւառի Դերչինսկի գիւղում, շուկայում, անկարգութիւններ տեղի ունեցան։ Ստրաժնիկները սպանեցին մի քանի գիւղացիների։

ԼՕՆԴՕՆ, 30 օգոստոսի։ «Դէյլի Մէյլի» հաղորդում է Տօկիօից, որ այնտեղ կազմակերպվել է բանւորական մի կուսակցութիւն, որ իր ծրագրում կառավարութեան մենաշնորհներին հակառակ է. պահանջում է երկու սեռի անձանց համար ընդհանուր ընտրողական իրաւունք, օրավարձի աւելացումն, բանւորական օրի կրճատումն, մահվան պատժի վերացումն, արտօնութիւնների վերացումն, հիմնական ռէֆօրմների նշանակումն և բոլոր միջազգային հարցերի համար հիմնել միջնորդ դատարան։

ՎԱՐՇԱՎԱ, 30 օգոստոսի։ Տէատրալնի հրապարակում երկու չարագործներ կրակեցին գաղտնի ոստիկանութեան գործակալների վրա, բայց գնդակները վրիպեցին և չարագործները կրակելով անյայտացան։

ԵԱՐԱՆՍԿ, 30 օգոստոսի։ Պետական Դումայի նախկին անդամ քահանայ Օգնևին, Սինօդը զրկել է քահանայական կոչումից։

ՎԱՐՇԱՎԱ, 30 օգոստոսի։ «Варшавскій Курьеръ»-ի ասելով, լեհական ուսումնարանային խորհուրդը դիմել է շրջանի ուսումնարանային հոգաբարձուին, որով խնդրում է՝ թոյլատրել ներկայ տարում բանալ 27 տարրական դպրոցներ զանազան նահանգներում։ Խորհուրդը մտադիր է ներկայ տարում բանալու 251 լեհական ուսումնարաններ երկրի զանազան մասերում։

ՌՕՍՏՕՎ ԴՕՆԻ ՎՐԱ, 30 օգոստոսի։ Կալանաւորված է Մոսկվայի բանկի փոխադարձ վարկի կողոպտման մասնակիցներից մէկն և միաժամանակ կալանաւորված է նրա համախոհը։

ՍԷԴԼԵՑ, 30 օգոստոսի։ (Պաշտօն. Թղթ.) 28-ի ցերեկը Օգօրօդնի փողոցում պատշգամբից կրակեցին մի օֆիցերի վրա։ Սդատօվսկի փողոցում զինւորները գնդակահարեցին երկու տուն։ Հիւանդանոցում ցուցակագրված են 6 վիրաւոր հրէաներ և կաթօլիկներ, 1 սպանված վախից մեռած. հրէական հիւանդանոցում կան 17 սպանված, ծանր վիրաւոր 12, թեթև վիրաւոր 60. հրէական գերեզմանատանը թաղված են 21 մարդ, բռնված և կալանաւորված են 34 հոգի. թնդանօթից արձակեցին 7 անգամ. քաղաքի կենտրոնը վնասված է. շատ խանութներում ապրանքները փչացած են, մի մասը թալանված։ Առևտուրը կանոնաւոր է։

ՎԱՐՇԱՎԱ, 30 օգ.։ Ժամանից զինւորական յանձնաժողովը. հրէաները շարունակում են գաղթել։

ԳՐՕԴՆՕ, 30 օգոստոսի։ (Պաշտ. Թղթակ.)։ 2 գիւղացիներ ծեծեցին Բէլօվէժսկի անտառի պահապանին, յետոյ սպանեցին Զուբրօվսկի պահապանին, յետոյ ամբոխը ծեծեց ուրեադնիկին։ Նահանգապետը միջոցներ ձեռք առաւ անկարգութիւններին վերջ տալու համար։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 30 օգոստոսի։ (Պաշտօնական)։ Մինիստրների խորհուրդը իր օգոստոսի 29-ի նիստում անհրաժեշտ համարեց յայտարարել Ուրալ քաղաքը ուժեղացրած պահպանութեան մէջ։

ՎԱՐՇԱՎԱ, 30 օգ.։ Անյայտ անձինք կրակ պարպելով Բելօստօկի փողոցով անցնող Վարշավայի հեծեալ զօրավաշտի հրամանատար գնդապետ Յակօվլևի վրա, անյայտացան։

ՌԻԳԱ, 20 օգ.։ «Դիւնա-Ցայտունգի» ասելով, անցեալ գիշեր ոստիկանութիւնը մի տան մէջ ձերբակալել է ֆէդերատիվ կօմիտէտի ռազմիկ խմբի անդամներից 6-ին. գտնվել են մի կարևոր գրութիւն, կեղծ անցաթղթեր, յեղափոխականների ցուցակը և մի քանի ատրճանակներ։

ԿԻԵՎ, 30 օգոստոսի։ Ռուսաց հեռագր. գործակալութեան Ռադօմի գաւառում անկարգութիւններ ծագելու մասին հաղորդած լուրը մտացածին է։

ՎԻԵՆՆԱ, 30 օգոստոսի։ Ընտրողական բարենորոգումներ մշակող մասնաժողովը իր պարապմունքները վերսկսեց։ Մինիստր-նախագահ Բէկը ողջունեց մասնաժողովին, ընդգծելով այն հանգամանքը, որ անհրաժեշտ է փութով վերջացնել այդ մեծ գործը, և մանաւանդ—Աւստրիայի ժողովուրդների նոր ապագան ապահովելը մասնաժողովի միակ պարտականութիւնն է հանդիսանում։

ՏՕԿԻՕ, 30 օգոստոսի։ Պալատի փոխ-նախագահ Տակկաշին մեկնեց քաղաքից ի կատար ածելու ֆինանսական յանձնարարութիւնը, նա կայցելէ Ամերիկա, իսկ հոկտեմբերին կլինի Լօնդօնում։ Ճանապարհորդութեան նպատակներից մէկն էլ 500 միլլիօն ֆունտ կնքելն է՝ 6%-ային փոխառութիւնները ծածկելու համար։

Խմբագիր՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱԴԱՄԱԼԵԱՆ

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880
(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
Բ. Ա. ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) միզասեռ. հ.։
Կ. Մ. ՋԻԿՕՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի, ներքին և նեարդային։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ. և վիրաբուժու. հ.։
Զ. Ի. ԲԱՐԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.։
Ի. Կ. ԳԶԵԼԻԵՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի։
Ա. Օ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—2 ժ. ներքին և երեխայոց հ.։
ԿԻՆ-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇԵՐԲԻՆԱ—1½—2 ժ. մանկաբարձութեան և կանանց հ.։
ԻՐԻԿՈՒՆՆԵՐԸ
Ա. Մ. ՓՈՂԻՆՕՎ—6—7 ժ. ներքին և երեխայոց և ծաղկատա.։
Խ. Գ. ԱԲԵՍԵԱՆՑ—7—7½ ժ. ներքին և երեխայոց հ.։
Վճարը 50 կ.։ Չքաւորները ձրի։ Համախորհրդի (գօնսուլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ՝ Բ. Նախասարդեան

ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺԻՇԿՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
մշտական մահճակալներով։
Ելիզավետինսկայա փողոց, 101, տէլէֆօն 1026
Հիւանդների ընդունելութիւն ամեն օր
Մ. Գ. ԱՂԱՋԱՆԵԱՆՑ 1—2 ժ.—միզասեռական, կաշու և սիֆիլիս։
Ի. Ն. ՆԻՀԱԶԱՐԵԱՆՑ 11—12 ժ.—ջղային, ներքին և էլէքտրօ-բուժութիւն։
Գ. Ն. ԴԵՄԻԴՕՎ—11—12 կ. կանանց հ. և մանկաբարձութիւն։
Ի. Ե. ԱՒԵՏԻՍԵԱՆՑ 12—1 ժ. կանանց հ. և մանկաբարձութիւն։
Գ. Հ. ԹԱԴԵՒՈՍԵԱՆ 12—1 ժ. ներքին և երեխայոց հ.
Մ. Գ. ԿԻՄՕՆՑ. 1—2 ժ. վիրաբուժական հ.
Մ. Մ. ԷԼՉԻԲԵԱՆ 1—2 ժ. քթի, կոկորդի և ականջի։
Գ. Ա. ԲԷՏԵՐ—երեխայոց և ներքին հ.
Հիւանդանոցում բժշկում են հիպնօզով, կատարվում միկրօսկօպիական, բակտերիօլօգիական և քիմիական հետազօտութիւններ, նոյնպէս և ծաղկատուութիւն և ստնտուների (кормилица) ընտրողութիւն։ Բժշկական խորհրդի համար վճարը 50 կոպ.։ Օպերացիայի և համախորհրդի վճարը ըստ համաձայնութեան։ Գիշերօթիկ հիւանդների բաժանմունքը բաղկացած է ընդհանուր սենեակներից և առանձին համարներից։
(չ. ու. գ.) 86—100

ԲԺՇԿԱՊԵՏ
Տ. ԳԷՈՐԳ-ԲԷԳԵԱՆ
ԱՉՔԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Ընդունելութիւն ամեն օր
Առաւօտեան ժամի 9-ից մինչև 12
Երեկոյեան » 5-ից մինչև 7
Վելեամինօվսկայա փողոց № 8։ (ե. ո.) 99—100

ԲԺԻՇԿ
Լեւոն Օհանջանեան
Մասնագէտ միզային, վեներական, սիֆիլիսի և կաշուի հիւանդութիւնների։ Ընդունում է առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը, երեկոյեան 6—9 ժամ.։ Կանանց և երեխաների համար 11—12 ժ.։ Հասցէն անկիւն Գօլօվինսկի պրօսպէկտի և Կօջօռսկայա փողոցի, տուն Թամամշեանի։ Մուտքը Կօջօռսկի փողոցից № 2.
(ա. օ.) 221—300

ԲԺԻՇԿ
Գ. ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆ
Ներքին և երեխայոց հիւանդութիւններ, մասնաւորապէս կրծքի։
Քննութիւն և բուժումն X ճառագայթներով առաւօտեան ժամը 10—11 և երեկոյեան 5—7։
Բեբուտովսկայա փող. տ. № 7 (Վէրցելի հիւանդանոցի մօտ)։ 14—30

ԲԺԻՇԿ
Գ. Ն. ՄԱՂԱՔԵԱՆ
Մասնագէտ ներքին և երեխայոց հիւանդութիւնների առանձնապէս ստամոքսի և աղիքների հիւանդութիւններ։ Ընդունելութիւնը ամեն օր 12—1 ժ. առա. և 5—6 երեկ.
Միխայլովսկի պր. տ. Ճավճավաձէի № 36
(կ. չ. ու.) 44—100

Լոյս տեսաւ առաջին տպագրութեամբ
ՂԱԶԱՐՈՍ ԱՂԱՅԵԱՆՑԻ
Ուսումն մայրենի լեզւի
Չորրորդ գիրքը
Գինն է 90 կոպէկ։
Գլխաւոր պահեստը՝ «Գուտտենբերգ» գրախանութում, ուր վաճառվում են և առաջին, երկրորդ և երրորդ գրքերը։ Հարիւրից ոչ պակաս գնողներին 25% զեղչ է լինում։ Յօրինողի հասցէն՝ Лермонтовская № 4. 1—10

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ
Համաձայն «Բօզարջեանց և Որդիք» Առևտրական Տան սնանկութեան՝ սրանով յայտնում եմ Թիֆլիսի մանրավաճառներին, որ յիշեալ Տան գործարանի ծխախոտները վաճառվում են նաև ինձ մօտ, համաձայն թերթերում («Զանգ» և «Т. Листокъ») յայտարարված գների և յայտարարած օրից, այն է՝
Պապիրօսը I տես. 5 ր.—4 ր. 30 կ.
» II » 3 ր.—2 ր. 60 կ.
Ծխախոտը II » 1 ր. 44 կ—1 ր. 25 կ.։
Հասցէն՝ Головинскій просп., № 23, տուն Օրբէլեանի, խանութ Գրիգոր Փարհեանի։
(ու. շ. կ.) 1—3

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
և վաճառվում է
ԱՐԵԱՆ ՁԱՅՆԵՐ
Երգարան գիրքը։
Ճանապարհածախսով գինը 75 կոպ.
Փառակազմը՝ գինը 1 ր. 10 կոպ.։
Նոյնպէս հայերէն զանազան գրքեր ցանկացողները դիմեն՝ Баку, О. Газанчяну, Бюро газетъ, противъ гост. «Кавказъ».
(շար. 1 ան.) 3—3

**Եղևարդի** ծխական դպրոցի համար արդէն վարձված են ուսուցիչներ. պատասխան չը ստացողներն ազատ են։
Ի դիմաց հոգաբարձութեան՝
աւագ ուսուցիչ՝ Պօղոս Պօղոսեանց

**Մի տիկին,** որ գիտէ լաւ կար ու ձև, հարթակար և ձեռագործ, ցանկանում է պաշտօն գտնել հայոց դպրոցներում։ Հասցէն՝ Баку, Второе Почтово-телеграфное отдѣленіе, чиновнику Ванцѣеву. 3—4

**Հաղբատի** հայոց օրիորդաց դպրոցի համար ՀԱՐԿԱՒՈՐ Է ռուսերէն և ձեռագործի մի վարժուհի ցենզով։ Դասագինը գլխաւոր առարկաների համար քսան րուբլի, երկրորդական առարկաների համար տասնհինգ րուբլի։ Բնակարան, վառելափայտ և ծառայ։
Դիմել՝ Ванкъ, Теръ-Восканянцу. 3—4

ՋՈՒԹԱԿԱՅԻՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ
Մ. Տ. ՎԱՍԻԼԵՎԻ
Պարապմունքների սկիզբն է սեպտեմբերի 1-ին և վերջը յունիսի 1-ին
Ուսման տարվայ վճարն է 90 րուբլի
2 կիսամեակներով
Ընդունելութիւնը օգոստոսի 29-ին, ամեն օր, ցերեկվայ 10—1 ժամը և երեկոյեան 5—7½ ժամը։ Грибоедовская, 5
(ա. օ.) 3—10

ԹԱՒՐԻԶԻ
Արամեան և ս. Աննայեան երկսեռ ուսումնարանների համար
ՀԱՐԿԱՒՈՐ ԵՆ
երկու ուսուցիչներ ռուսաց լեզուի և այլ առարկաների համար և մի ձեռագործի վարժուհի։ Պայմանների համար հարցնել «Մշակ»-ի խմբագրատանը պ. Խանազադեանին։ Ժամը 12—1-ը։ (հ. ու. շ. կ.) 2—4

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
Թուաբանական խնդիրների ԺՈՂՈՎԱԾՈՒ
(Եւտուշևսկուց և ուրիշներից քաղուած)
կազմեց Ս. Զօրչօֆեան
Գինն է 30 կոպ.։
Վաճառվում է հեղինակի մօտ Нахичеван н. Д. Феодоровская ул. д № 12. 2—5

„ՓԵԹԱԿ"
Կար ու ձևի ուսումնարան և արհեստանոց
ՕՐ. Մ. ՔԱԼԱՆԹԱՐԵԱՆԻ
Վերանորոգվում է աշակերտուհիների ընդունելութիւնը օգոստոսի 25-ից առաւօտեան ժ. 10-ից մինչև եր. ժ. 4-ը։
Архивный пер. д. № 4 Калантаровой.
(ու. կ. ե.) 3—3

Մայկօպի հայոց միդասեան երկսեռ դպրոցի համար
ՀԱՐԿԱՒՈՐ Է
մի հմուտ ուսուցիչ (մի քանի տարի ուսուցչութիւն արած), որը կարողանայ և քառաձայն խումբ կազմել և ղեկավարել եկեղեցում կիրակի և տօն օրերին։ Ռոճիկն է 840 րուբլի 22—24 դասի և խմբապետութեան համար, իսկ ճանապարհածախսը մինչև Մայկօպ առանձին։ Ցանկացողները կարող են դիմել հոգաբարձութեան, յայտնելով իրանց երբ և ուր աւարտելը և վերջին տարվայ ուսուցչութեան տեղը։
Հասցէն՝ Майкопъ, Куб. обл. Армянскому Приходскому Попечительству. 3—3

Լոյս տեսաւ
ԴԱՍԱԳԻՐՔ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԵԱՆ
Քաղաքական մաս
ԱՒՍՏՐԱԼԻԱ, ԱՖՐԻԿԱ, ԱՍԻԱ ԵՒ ԱՄԵՐԻԿԱ
Կազմեց՝ Լևոն Բաքայեան
Գինը 65 կոպ.
Դիմել՝ Тифлисъ, Книжный магазинъ «Гуттенбергъ». 4—5

ԼՈՅՍ ՏԵՍԱՆ
ԳԾԱԳՐՈՒԹԵԱՆ ՕՐԻՆԱԿՆԵՐ
Հայոց դպրոցների համար
ՏԵՏՐԱԿ Ա.
ՈՒՂԻՂ ԳԾԵՐ
Պատրաստական դասընթաց
կազմեց՝ Գարեգին Լևոնեան
Գինն է 20 կոպ.
Դիմել՝ Тифлисъ, Книжный магазинъ «Гуттенбергъ» 4—5

„Գուտտենբերգ"
գրավաճառանոցում ծախվում են
«Թուաբանական խնդիրներ և օրինակներ», ա. մաս, փոխադրութիւն Ար. Սպարապետեանի . . . . . 30 կ.
Նոյնը բ. մաս . . . . . 30 կ.
Նոյնը գ. մաս . . . . . 30 կ.
Գումարով գնողներին զեղչով
Դիմել՝ Тифлисъ, Книжный магазинъ «Гуттенбергъ». 7—10

Մակար Տէր-Սարգսեանի
ՀԱՅԿԱԿԱՆ ԳԵՂԱԳՐՈՒԹԻՒՆ
Գինը 30 կոպ.
ԴԱՍԱԳԻՐՔ ԳԾԱԳՐՈՒԹԵԱՆ
Գինը 50 կոպ.
Уроки чистописанія
Գինը 25 կոպ.
100-ից ոչ պակաս գնողներին 20% զեղչ։
Դիմել՝ Թիֆլիս—Կենտրոնական գրավաճառանոցին։ Երևան՝ յօրինողին։ 5—10

**Կախ-ատանի** հայոց երկսեռ միդասեան (ա. և բ. բաժան.) դպրոցի համար հարկաւոր է մի փորձված ԱՒԱԳ ՈՒՍՈՒՑԻՉ հայոց լեզուի, թուաբանութեան և երգեցողութեան դասերով. պէտք է պատրաստէ նաև երգեցիկ խումբ եկեղեցում երգելու։ Տարեկան 500 րուբլի ռոճիկով միայն։ Ցանկացողները կարող են դիմել՝ Кахи, (Закатальскаго округа) Священнику Меликседеку Сылдырянцъ. 3—3

ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ
Թիֆլիսի գրավաճառների մօտ
ԼԵՒՈՆ ՄԵԼԻՔ-ԱԴԱՄԵԱՆԻ
փոխադրած՝
Մանկական պատկերազարդ ու էժան հետևեալ գրքոյկները
ՓՈՔՐԻԿ ՑՈԼԱԿՆ
ՈՒ
ԽԼԸՇԻԿ ՆԱՊԱՍՏԱԿԸ
Գինը 55 կոպէկ
—
ՆԱՊԱՍՏԱԿ ԽԷՉԱՆԻ
ՎՐԷԺԽՆԴՐՈՒԹԻՒՆԸ
կամ
ԻՆՔԴ ՔԵԶ ՕԳՆԻՐ
Գինը 40 կոպէկ
—
ԱՌԱՋԻՆ ՎԱՍՏԱԿ
Գինը 40 կոպէկ
Եւ թարգմանած՝
ՈԳԵՀԱՐՑՈՒԹԻՒՆ
3 արարուածով պիէսը
Գինը 50 կոպէկ։
Ցանկացողները կարող են դիմել նաև Тифлисъ, Орбеліановск. ул. № 24 Левону Меликъ-Адамянъ.
(շ. 1) (հ) 12—20

ԵՐԿՈՒ ՈՒՍԱՆՈՂՆԵՐ
Մաթեմատիկոս և պատմաբան
(Լազարեան ճեմարան աւարտած)
Ցանկանում են ուսուցչական պաշտօն ստանալ հայոց դպրոցներում։ (Ցանկալի է միևնոյն տեղում)։ Դիմել՝ Москва, Мал. Харитоновскій пер., д. Котова, кв. 10. 5—10

Մատրասա գիւղի ծխական երկսեռ դպրոցի համար
Հարկաւոր է
մի ճեմարանաւարտ կամ Ներսիսեանաւարտ ուսուցիչ շաբաթական 27 դասով։ Ռոճիկ 450 րուբլի։ Նախապատուութիւն է տրվում Յովնանեան դպրոցաւարտ վարժուհու, որը կարող է ապրել հոգաբարձու Ագրիեվի ընտանիքում, փոխարէնը պարապելով նրա երկու երեխաների հետ։
Դիմել՝ Շամախի Ագրիեանին։ 4—4

ԱԼԷՔՍԱՆԴՐՕՊՕԼՈՒՄ
ՆԱԽԿԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ԴՊՐՈՑ
Ա. Արաքսջեանցի և պանսիօն Հ. Խաչատրեանցի վերսկսում է երթևեկ և գիշերօթիկ աշակերտների ընդունելութիւնը։
Դպրոցի նպատակն է մատչելի գներով յաջողութեամբ աշակերտներ պատրաստել առևտրական դպրոցը ընդունվելու համար։ 3—5

**Մի հայուհի,** որը լաւ գիտէ ռուսերէն և ֆրանսերէն լեզուները, ցանկանում է ճաշի և սենեակի փոխարէն ինտելիգենտ ընտանիքում երեխայի պարապմունքներ ունենալ։ Հարցնել «Մշակ»-ի խմբագրատանը։ 2—5

Ներսիսեան դպրոցի շրջանաւարտ մի երիտասարդ
Որոնում է ուսուցչական պաշտօն հայոց եկեղեցական-ծխական դպրոցներում համաձայն է նոյնպէս Պարսկաստան գնալու։ Ցանկանում է աւանդել հայոց լեզու, թուաբանութիւն, պատմութիւն, կրօն։ Դիմել՝ Կարս, Մարտիրոս Ս հակեանին։ (չ. ու. կ.) 3—3

### ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Ամառային գնացքների երթևեկութիւնը)

(Ժամերը նշված են Պետերբուրգի ժամանակով, իսկ փակագծերի միջինը Թիֆլիսի ժամանակով)։

| | Փոստային | Մարդատար. | Արագ. | Ապրանք. |
|---|---|---|---|---|
| Բագուից դուրս գալը | 4 ժ. 53 ր. ցեր. | 11 ժ. 03 ր. ցեր. | 12 ժ. 20 ր. գիշ. | 4 ժ. 03 ր. |
| Թիֆլիս հասնելը | 11 » 26 » » | 5 ժ. 25 ր. առ. | 1 ժ. 30 ր. գիշ. | 9 ժ. 37 ր. |
| Թիֆլիսից դուրս գնալը | 12 » 26 » » | 6 ժ. 01 ր. առ. | — | — |
| (Թիֆլիսի ժամանակով) | 1 » 24 » » | 6 ժ. 59 ր. առ. | — | — |
| Բաթում հասնելը | 1 » 38 ր. գիշ. | 7 ժ. 07 ր. եր. | — | — |
| Բաթումից դուրս գալը | 5 » 22 » » | 5 ժ. 24 ր. ցեր. | — | — |
| Թիֆլիս հասնելը | 6 » 11 ր. եր. | 6 ժ. 39 ր. առ. | — | — |
| Թիֆլիսից դուրս գալը | 6 » 53 » » | 7 ժ. 37 ր. առ. | 5 ժ. 35 ր. ցեր. | 10 ժ. 40 ր. |
| (Թիֆլիսի ժամանակով) | 7 » 56 » » | 8 ժ. 35 ր. առ. | 6 ժ. 33 ր. ցեր. | 11 ժ. 38 ր. |
| Բագու հասնելը | 1 » 20 ր. ցեր. | 12 ժ. 42 ր. գիշ. | 6 ժ. 19 ր. առ. | 3 ժ. 55 ր. |
| Երևանից դուրս գալը | 12 » 02 » » | — | — | 11 ժ. 26 ր. |
| Կարսից » » | 8 » 57 » » | — | — | 3 ժ. 18 ր. |
| Ալէքսանդրօպօլից դուրս գալը | 7 » 38 ր. եր. | — | — | 7 ժ. 06 ր. |
| Թիֆլիս հասնելը | 5 » 06 » առ. | — | — | 4 ժ. 49 ր. |
| Թիֆլիսից դուրս գալը | 11 » 12 » գիշ. | — | — | 3 ժ. 25 ր. |
| (Թիֆլիսի ժամանակով) | 12 » 10 » » | — | — | 4 ժ. 23 ր. |
| Ալէքսանդրօպօլից դուրս գալը | 10 » 30 » առ. | — | — | 2 ժ. 47 ր. |
| Երևան հասնելը | 1 » 55 » ցեր. | — | — | 6 ժ. 10 ր. |
| Կարս հասնելը | 4 » 23 » » | — | — | 8 ժ. 48 ր. |

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ ԵՒ ՎԱՃԱՌՎՈՒՄ Է
ԱՇԽԱՐՀԱԲԱՐԻ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ
դասագիրք ստորին դասարանների համար
յօրինեց Մ. ԱԲԵՂԵԱՆ, ուսուցիչ ս. Էջմիածնի Գ. ճեմարանի
Գինն է 75 կոպէկ։
Դպրոցների համար, եթէ անմիջապէս հեղինակից առնուած 25 օրինակ գնելու լինեն 75 կոպէկի տեղ 50 կոպէկ։ Ճանապարհածախսը (25 օրինակի համար պօստի փաթեթով րուբլի) գնողների վրա է։ Պէտք է վճարել կանխիկ, կամ պատուէր տալ վերադիր վճարով։ Պատուէրներն անյապաղ և ճշտութեամբ կը կատարվեն։ Դիմել՝ Эчміадзинъ, Академія, Мануку Абегянъ, կամ Թիֆլիսի գրավաճառներին։
(ե. հ. ու. կ.) 8—20

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ
(Թիֆլիս, Լերմօնտօվսկայա փողոց, №. 15)
Ցանկացողները, ունենալ իրանց առևտրական գործերի համար ուսման ընթացքը աւարտած աշակերտներ և աշակերտուհիներ, թող բարեհաճեն դիմել կուրսերի հիմնողին՝ Ս. Մանուէլեանցին։ Աւարտողները ստացել են մասնագիտական առևտրական կրթութիւն և ունեն Կովկասի ուսումնարանական շրջանի հոգաբարձուի հաստատած ծրագրի համեմատ, օրինաւոր ատեստատներ։
ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՍԿՍՎԵԼՈՒ ԵՆ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ
Կուրսերի ծրագիրը և կանոնները կարելի է ստանալ ձրիապէս կուրսերի հիմնողի բնակարանում։ Օտարաքաղաքացիները դիմում են ТИФЛИСЪ учредителю коммерческихъ курсовъ С. П. Мануэльянцу. շ. 1 անգ. (ու) 8—12

Տպարան «ՀԵՐՄԷՍ» ընկ.
Электропечатня, Типографскаго Т—ва. «ГЕРМЕСЪ» Мадатовская ул. №5